Լեռ
1540

# ԳՈՒՐԳԷՆ ԵՒ ԴԵՐԵՆԻԿ

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՍԻՐԵԱՑ

Հ. ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻԽԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷ

1999

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ

1879

# ԳՈՒՐԳԷՆ ԵՒ ԴԵՐԵՆԻԿ

## ԹԱՏԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՍԻՐԵԱՑ

Հ. ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻԽԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷ

1608.

ԼԷՕԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ի ՎԷՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1879

ՅՕՐԻՆԵԱԼ ՎԱՍՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԺԴ ԴԱՍՈՒՆ

# ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՒՑԵԱԼ Ի ՆՈՑԱՆԷ

Ի ՎԵՐՋՆՈՒՄ ԱՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԻՒՐԵԱՆՑ

1879 ՓԵՏՐ.

Հմ 1545

41540-Աօ

## ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

«Այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն... հասեալ կալան զնա և տարան ետուն ի բանտ երկաթից ի քաղաքն Հագամակերտ: Եւ ծառայ մի Դերենիկին, որ բանտապանն էր, լուծեալ զնա ի կապանացն և տարեալ մուծանէ ի սենեակն ուր ննջէր Դերենիկն. և ծառայն զչարիս խորհեալ սպանանել զԴերենիկն, և զաշխարհս նուաճել զիշխանութիւն Գուրգէնի, զի և դիպող էր ժամն: Բայց Գուրգէն ընտրեաց զսէրն Քրիստոսի քան զսէր փոքրամեայ աշխարհիս. ոչ խնդրելով զվրէժ արեան սպանելոյ հօր նորա ի պապոյն նորա. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի, ասէ. Որդեակ իմ Դերենիկ, ողջո՛յն քեզ, ողջո՛յն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհն Յունաց: Եւ նորա առ ահն պակուցեալ, ասէ. Հայր իմ, խնայեա յիս. և այլ ոչ զօրեաց բարբառել ինչ:» Թովմա Արծրունի:

Դերենիկ Գրիգոր որդի Աշոտոյ, տէր Վասպուրականի, խանդացեալ ընդ յառաջադիմութիւն Գուրգէնի որդւոյ Ապուպէլճի իշխանի Մարդաստան գաւառի, որ

ի ժամանակի գերութեան իշխանացն Հայոց ի Բուղայէ՝
միակ մնացեալ յերկրին Արծրունեաց՝ յանձանձէր զայն
և զօրավարէր, նենգութեամբ ըմբռնէ զնա. ընդ որ
տրտմեալ Հասանայ մտերմի նորա, որ յայնժամ ի դրան
Գերենկայ կայր, գումարէ առ ինքն արս հաւատարիմս
առ ի թափել զԳուրգէն, վստահացեալ ի ձեռնտուու-
թիւն Ապուջափրի, պահապանին Հադամակերտի՝ ոստա-
նին Արծրունեաց, գժտեալ գոլով նորա ընդ Գերենիկն.
և յեղակարծումն ժամու դիմեալ համախոհիցն յՆրան-
գանի գիւղ՝ փրկեն զԱշոտ որդի Գուրգենի. և ապա դի-
մեն ըմբռնել և զնա ինքն Գերենիկ յամրի անդ իւրում և
գերեթափ առնել զԳուրգէն: Սենեքերիմ մտերիմ Գե-
րենկան, թելադիր լինի սպանանել զԳուրգէն, և սա
խղճիւ և յոչ կամս հաւանի դեղ մահու արբուցանել
նմա: Այլ ի նմին պահու Հասանեանք՝ մատնութեամբ
Ապուջափրի՝ մտանեն յոստանն և յապարանս և մինչև ի
սենեակ անդր ուր ննջէր Գերենիկ յանկասկածս, մու-
ծեալ անդր զզերծուցեալն Գուրգէն. որոյ հանեալ ար-
տաքս զայլսն, միայնակ և սուսերամերկ մտանէ ի մահիճն,
և կարդացեալ զԳերենիկն յանուանէ, փոխանակ սպա-
նանելոյ զնա որպէս բռնադատէին իւրքն, ի բաց թողեալ
զսուսերն և զսակրն և փարեալ զպարանոցաւ նորա, ոչ
միայն անյիշաչարութեամբ ներէ ըմասուն և դաւանացն,
այլ և ինքնակամ հրաժարի ի ժառանգութենէ և ի հա-
րենեացն, զի մի խոչընդական լիցի նմա, և աւէ թո
գնալ ի Յոյնս: Զահի զամօթի հարեալ Գերենկան
ղաչէ մի հեռանալ յաշխարհէն. այլ նա ոչ անսայ. և ա-
ռաւել ևս մեծանձնութիւն ցուցեալ, քանզի զայնու
ժամանակաւ վախճանեալ էր ամուսին Գերենկայ, խոս-
տանայ խօսել և ածել նմա կին զՍոփի դուստր իշխանաց
իշխանին Հայոց՝ Աշոտոյ Բագրատունւոյ, որ յետ սակա-
ւուց թագաւորեացն, և ինքն հրաժարեալ գնայ ի կող-
մանս Կարնոյ:

Այս է նիւթ թատերգութեանս:

Ջեղանակս պարուց, զցուցս (Romanza), զերկա-
նուագս (Duetto), զեռանուագս (Terzetto) առեալ է մեր,
որպէս երևի յառաջիկայսդ, յականաւոր երգահանից և
յարմարեալ ի նոսա զնմաստս թատերգութեանս: Յոր
սակս բանի հարկ եղև մեզ սակրիւրել ուրեք ի կանո-
նաց հայկական տաղաչափութեան: Իսկ երաժշտական
գործիք որք միաբանէին ձայնի աշակերտաց, էին դաշ-
նակ (piano), վին (violino), բանդեռն (viola), գավին
(violoncello), բամբ (contrabasso), որոց խաղքն, ա-
ռանձին խնամով ճարտար ուսուցչի վարժարանիս և ծա-
նօթ երգահանի Նիկողայոսի Գոդոն, փոխեցան ըստ չա-
փու սահմանի ձայնից աշակերտացն երգչաց. և նոյն
ինքն ուղղիչ եկաց երգոց և երաժշտական գործեաց:

Եթէ տաղաչափութիւնն առ յարմարել կանխաւ-
հնարեալ եղանակաց՝ ազատութիւն պահանջէր, աւելի
ևս ներեալ է այդ ի հնարս կամ ի յօրինուած բանից
թատերականաց. թէպէտ և մեր չէ խոտորեալ ի սոյդ
պատմութենէ որ աւանդեն մեզ և զնոյն արաբախառն
անուանս անձանցն յիշեցելոյ. բայց միայն տալով նմա
զԱշոտ յորդիութիւն. զի յետ դիպացս այսոցիկ յիշի, ոչ
գիտեմ արդեօք երկրորդ անգամ, փեսայանալ Գուրգե-
նի ի դուստր իշխանին Անձևացեաց և ժառանգել զայն
գաւառ: Մարթ էր ապաքէն առաւել ևս ազատօրէն
հիւսել զայս գործ, ոչ դժուարաւ գտանելով դէպս
սրտառուչս և գողտրիկս, այլ վիճակ տեղւոյ և անձանց՝
վասն որոց յօրինեցաւ և առաջին փորձ հեղինակին՝
ակն ունիմ թէ անմեղադրելի արասցեն զոր ի սմայս թե-
րութիւնս. այն զի ոչ առ վարկպարազի ընթերցումն
գրեցաւ սա, այլ ի հանդէս թատերականն, յորում
այլազգ լսի և ընդունելի լինի գործն՝ ըստ չափու ճարտա-
րութեան երգչաց և դերասանից, քան յանդորր և յան-
շարժ վերծանութեան:

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

# ԳՈՒՐԳԷՆ ԵՒ ԴԵՐԵՆԻԿ

## Ա Ն Ձ Ի Ն Ք

ԳՈՒՐԳԷՆ, *տանուտէր Մարգաստանի։*

ԴԵՐԵՆԻԿ, *իշխան Արծրունեաց։*

ԱՇՈՏ, *որդի Գուրգենի։*

ՀԱՄԱՆ, *զօրապետ Դերենկան, մտերիմ Գուրգենի։*

ՎԱՍԱԿ, *մտերիմ Դերենկայ։*

ՍԵՆԵՔԵՐԻՄ, *իշխան Արծրունի և մտերիմ Դերենկան։*

ԱՊՈՒՄԿԴԷՄ, *զինակիր Դերենկան։*

ԱՊՈՒՋԱՓՐ, *բերդապահ Հադամակերտի։*

ՄՈՒՍԷ, ԱՐՇԻՐ, ՏԻՐԱՆ, } *երեքեան զօրավարք Գուրգենի։*

ՄԼԷՃ, ՍՄԲԱՏ, } *ճանապարհորդք երկու։*

ԶԻՆՈՒՈՐ *ումն։*

ԶԻՆՈՒՈՐՔ *հաւատարիմք Գուրգենի։*

ԶԻՆՈՒՈՐՔ *Դերենկան։*

*Տեսարանն է յանտառին Երնգանի մերձ ի Հադամակերտ։*

# ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

---

## ՏԵՍԻԼ Ա. (*երգ և երաժշտական գործիք* [1])։

ԱՐՇԻՐ, ՄՈՒՍԷ, ՏԻՐԱՆ *և տակաւ ժողովին և այլք։*

ԱՐՇԻՐ

*Ընկերք իմ։*

ՄՈՒՍԷ

*Զի՞նչ լուրք են։*

ԱՐՇԻՐ

*Դիմեմք։*

ՏԻՐԱՆ

*Հրնչեաց փողն, ահ, ի զէն։*

ՊԱՐ

*Ի զէն, ընկերք։*

ԱՐՇԻՐ

*Ի բացեայ լերանց հովիտս ըղձայն լսեմ փողոյն,*
*Մի՞ գուցէ Գուրգէն ի վտանգ անկեալ*
*Նպաստ ինչ խնդրէ։*

ՄՈՒՍԷ

*Օ՜ն, հասցուք առ նա։*

ԱՐՇԻՐ

*Ո՛չ։*

ՄՈՒՍԷ

*Իսկ թէ նա անօգնական*
*Ի գուպարին անկանիցի, զի՞նչ անդուստ մեզ ելցէ շահ.*
*Կալանաւոր Գուրգէն՝ պանդըխտել մնայ մեզ։*

---

1 *Յարմարեալ ի պարն* «Cedrico! Ivanhoe!» *թատերերգութեան փաչինի երգահանին։*

ՏԻՐԱՆ

Եւ առ ի՞նչ անգործք ։

ՄՈՒՍԷ

Զի՞նչ ։

ՊԱՐ

Մինչ կազմ կամք մեք ի զէն ։

ՄՈՒՍԷ

Լաւ է գիմել ։

ՏԻՐԱՆ

Ցո՞ գիմեսցուք ։

ԱՐՇԻՐ

Կացցուք աստէն ։

ՄՈՒՍԷ

Ի գարանի կացցուք աստէն ։

ՏԻՐԱՆ

Ի գարանի ։

ԱՐՇԻՐ

Զի աստ Հասան գայցէ առ մեզ ։

ՄՈՒՍԷ

Ըգփողոյն լսեմ ձայն, լուռ լերուք ։

ՊԱՐ

Ի զէն, ընկերք, ո՛ն անդր, ի զէն ։

ՄՈՒՍԷ

Մի յետնեսցուք յարուցնել ։

ՊԱՐ

Մի յետնեսցուք յարուցնել ։
Կացցուք աստ դարանեալ առասր ի յազդեր.
Եւ արեամբ թշնամւոյն խայտասցի երկիր,
Պանծասցի Հասան յիւր մեծ յաղթանակ,
Արեամբ մեր վարձս առեալ ։
Բայց Հասան է որ գայ զօրօք.
Ահա Հասան առ մեզ դիմէ ոըխուր. (կրկ. երգչախումբն).
Աչք իւր թուին զայրացեալ, ահա եհաս ։



## ՏԵՍԻԼ Բ. (Երգ և երաժշտական գործք [1]) ։

## ՀԱՍԱՆ, ԻՒՐՔՆ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ ։

ՀԱՍԱՆ

Եթէ իցեն ձեր, ով հաւհարգք, իբրև զաղեղս սիրտ արի,
Աստ միաբան գիցուք գուպար, ուստ գայ ոսոխն անցանել ։
Հաղամակերտ Գերենիկ փութայ յաւանն ամրանալ
Ցանմատչելին գեղարդանց. աստ կացցուք լինել խափան.
Եւ ի փողել եղջերն՝ այր այր ի զէն վառեսցի ։

ՊԱՐ

Պատրաստք կամք ի զէն դիմագրաւ, Գուրգէն ընդ նմա՞ ։

ՀԱՍԱՆ

Այո՛, Գուրգէն և Աշոտ ։

ՊԱՐ

Գուրգէն ։

ՀԱՍԱՆ

Այո՛ ։

ՊԱՐ

Աշո՞տ ։

ՀԱՍԱՆ

Այո՛ ։

ՊԱՐ

Զփայլատակումս, քո մեծդ Աստուած, շանթեա՛ ի գլուխ ամպարշտին.
Ծանիցեն ազգք ըզաստուածութիւն ահեղ բազկի քո հըզօր.
Տոչորեսցին քո սուրբ հըրով որով ըզՀայս վառեցեր ։

ՀԱՍԱՆ

Հըռչակեսցեն հովիտք և մայրք դարուց ի դարս զանուն քաջաց,
Արասցուք թողցուք և մեք ըզհետ մեր անուն փառաց.
Ի Հերայ մինչև ցՆփրատ ծափս հարցեն և ժողովուրդք ։

---

1 Յարմարեալ ի պարն Introduzione di Norma Պէլլինի երգահանին ։

ՊԱՐ

Ընդ բնաւ Արծրունիս հընչեսցէ լուրն աւետեաց,
Ի Հերայ մինչև ցՆփրատ ծաւալս հարցէն և ժողովուրդք։
(Երգէ. Քաղցրաձայն անգամ)։

Արդ, ո՛ն, մըտցուք ի դարան,
Արփին մերձ է յելս.
Ո՛վ երկինք, օգնեա՛ մեզ։ (Գնայ պարն)։

## ՏԵՍԻԼ Գ.

### ՀԱՍԱՆ, ՄՈՒՍԷ, ԱՐՇԻՐ։

ՀԱՍԱՆ

Կա՛ց, Մուսէ, աստ ընդ իս, և դու Արշիր լեր ընկեր.
Զամենայն կարգեալ բարւոք արդ ի յոստանն կոյս դիմեմ
Զի մի՛ խէթ կասկածանաց անկցի ի սիրտ Գերենկան։
Ո՛հ, ի յիշել իմում զԳուրգէն ըզհոյակապ այրըն քաջ
Անողորմ սէգ արծրունւոյն յանգութ ժանիս ըմբռնեալ,
Սիրտ ի լանջս իմ մորմոքի, զարթնու յոգիս տենչ արեան։

ՄՈՒՍԷ

Բայց զի՞արդ Գուրգէն յանհոգս, անձին զգացեա մասն եղև.
Ո՞վ ստիպէր ըզնա ի ձեռըս Գերենկան անկանել։

ՀԱՍԱՆ

Գուրգէն'նդ արիւնախանձ կենաց տաղտկացեալ ի վաղուց՝
Հայրենեաց իւրոց ցանկայր նուաճել բարիս յանդորրու,
Եւ զիշխանաց երկփեղկ գուպար ածել այսպէս ի համբոյր,
Եւ առ այն ի հրաւէր փութայր մանուկ իշխանին.
Մոռացեալ զի հայր իւր սուսերահար լեալ երբեմն
Ի հաւուն Գերենկան ըզկեանըս իւր զրկէր։
Ինձ և բաւէր յորդոր լինէր թողեալ զգեղարդն և ըզսուր՝
Հովուական կենաց բազորդ առ հայրենի խարուկաւ
Հանգչել ի սպառ. այլ իղձ մարտի տակաւին յիս հրաբորբոք
Խրախոյս կարդայր բարուցըս սէգ ի բանակի Գերենկան
Առաջին ի զօրագլուխս ի դաշ բազմել յետ նորա.
Զայս ևս շնորհս ինձ նա առնէր այն ինչ թողեալ ըզԳուրգէն։
Արդ զանզէնն անկուշեալ հազըրս լարէր նենգութեամբ,
Եւ յաղջամուղջ գիշերի չըղթայակապ ըզԳուրգէն
Եւ զԱշոտ կալեալ մանուկ՝ գընէ յարգելս յԱգամկերտ։



ԱՐՇԻՐ

Իսկ թէ կասկած ինչ ըզքէն անկցի ի միտս Գերենկան,
Ո՞չ լաւ իցէ քեզ աստ մընալ հեռի ի բաց յոստանէն։

ՀԱՍԱՆ

Լո՛ւռ լերուք, քայլափոխս լսեմ ոտից և տրոփիւնս։
Ի խորշըս ձեր զօղեալ կացջիք և միայնակ թողէք զիս։

ՄՈՒՍԷ

Իսկ թէ վընա՞ս ինչ հասցէ։

ԱՐՇԻՐ

Կամ անձինդ բուռն արասցեն։

ՀԱՍԱՆ

Մի՛ ինչ խիթայք, զի Վասակ է ջերմ մտերիմ Գերենկան։
(Արշիր և Մուսէ դառնան)։

## ՏԵՍԻԼ Դ.

### ՀԱՍԱՆ, ՎԱՍԱԿ, ԶԻՆՈՒՈՐՔ։

ՎԱՍԱԿ

Ողջո՜յն ընդ քեզ Հասան քաջ։

ՀԱՍԱՆ

Ողջոյն և քեզ, ո՛վ Վասակ։
Այլ զի՞ այդ գունդ ըսպառազէն։

ՎԱՍԱԿ

Զի՛, չեհա՞ս լուր ինչ առ քեզ.
Բան ընթանայ յոստանին, յՆըրընգանւոյ ի Թաւուտս
Բազմաթիւ գունդ անօրէն ապըստամբաց ժողովեալ՝
Նըստին ի դարանի զանգըս ունել իշխանին՝
Որ կալ և կապ այսօր ածէ զայրըն խռովիչ ըզԳուրգէն։

ՀԱՍԱՆ

Եւ ո՞ այն՝ որ պատմեաց զայդ և զչարութիւն Գուրգենի։

ՎԱՍԱԿ

Եկք ոմանք յՈրսիրանից համբաւեցին ըզգաւանան։

ՀԱՍԱՆ

Իսկ դու արդեօք բանիցն հաւանս ընծայեցեր։

ՎԱՍԱԿ

Զկամ յուրասս։

ՀԱՍԱՆ

Վարկպարազի է կասկածդ այդ։

ՎԱՍԱԿ

Իսկ թէ իցէ ճշմարիտ։

ՀԱՍԱՆ

Երկիցէ յայնժամ Վասակ և երկիցէ Դերենիկ,
Մի՛ գուցէ...

ՎԱՍԱԿ

Ընդէ՞ր ցասնուցուս, առ ի՞նչ դէմք քո խռովին
Իցէ՞ ինչ արդեօք և քո 'նդ նոսա բան եղեալ։

ՀԱՍԱՆ

Եւ ի քէ՞ն երկընչիցիմ. Երթ իշխանիդ կալ պաշտպան,
Ե՛րթ ըզԳուրգէն խռովիչ ածել կապեալ. ո՛ն և ո՛ն
Զի ուխտադրուժըն քո տէր արբցէ զբաժակ դառնութեան,
Եւ արբեսցին որք միանգամ...

ՎԱՍԱԿ

Եւ այսպիսի բանք առ իմ՞.
Ո՞չ դու հաւատարիմ յերկրորդ բազմիս ի գահոյս։

ՀԱՍԱՆ

Ե՛ս, այո՛. այլ ի կործան արկանել զայն փոյթ ընդ փոյթ։

ՎԱՍԱԿ

Արդ ուրեմն չէին ի զուր կասկած և խէթք զքէն բազմաց։

ՀԱՍԱՆ

Խէթք Դերենկան են այդոքիկ նախանձորդին Գուրգենի։

ՎԱՍԱԿ

Եւ յանդըգնիս իմ առաջի ըզխըրոխտ բանսըդ կըշռել։

ՀԱՍԱՆ

Եւ ո՞վ իցէ Վասակ թէ ոչ շընթող փառարանց։



ՎԱՍԱԿ

Ա՛յսպէս ուրեմն յայտնաբարբառ գլուխ ամբաստանաս յիշխանէն.
Ըզգո՛յշ լեր, իմ է հրաման...

ՀԱՍԱՆ

Եւ դու ըզգո՛յշ, ապիկար։

ՎԱՍԱԿ

Օ՛ն զօրականք առ մատնիչդ ... (Դիմեն ընդոստք Վասակայ)։

ՀԱՍԱՆ

Հասէք ինձ, քաջք, ի թիկունս։
(Ելանեն ի դուրանէ հաւատարիմք Հասանայ)։

## ՏԵՍԻԼ Ե.

ՀԱՍԱՆ, ՎԱՍԱԿ, ԶԻՆՈՒՈՐՔ, ՀԱՒԱՏԱՐԻՄՔ ՀԱՍԱՆԱՅ։

ՎԱՍԱԿ

Ո՞վ են դոքա, անօրէն, ուրեմն և դու ընդ նոսա։

ՀԱՍԱՆ

Ուսուսցեն դոքա քեզ և իշխանիդ չըդըրժել։
Մուսէ՛ ա՛ռ ըզդաշըյնս և կա՛լ զդոսա աստ ուրեք։

ՎԱՍԱԿ

Այո՛ գընամ, սակայն ծանիր զի դնես ըզգլուխ քո ի կշիռ։ (Գնան)։

## ՏԵՍԻԼ Զ.

ՀԱՍԱՆ միայնակ

Ե՛րթ աղուէս, տեսցես թերևս ընդ հուպ ընկեր քում բախտին
ԸզԴերենիկ, զՍենեքերիմ և զոստանիկսըդ պըճնասէր։
Գամ մի դաւոյն եկեալ ի յայտ, ի զուր կեղծիք յայնմհետէ.
Այլ գիտա՛կ իցէ արդեօք եղելոցս այս Դերենիկ.
Ա՛ռ իս է հէքըն Վասակ ամենայնի զրուցատար.
Այլ ո՞վ առ իս իջանէ ի բըլըրոցս այս հանդիպոյ։

## ՏԵՍԻԼ Է.

ՀԱՍԱՆ, ԱՊՈՒՋԱՓՐ (Երգ և երաժշտական գործի [1]):

ՀԱՍԱՆ

*Հիմ եկեալ ես աստ, Ապուջափր:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ըզքեզ, Հասան քաջ, Թափառեալ որոնեմ:*

ՀԱՍԱՆ

*Թէ յինէն խորհուրդ մի ի ժամուս հայցիցես:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Փըրկեա՛ զԳուրգէն:*

ՀԱՍԱՆ

*Եւ զի՞նչ կայ քո ընդ նըմա, երբեմն եղեր դասալիք.*
*Արդ վերստին դարձ առնես.*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Մի՛ դու ինձ այդպիսիս բարբառիր, ո՛վ արիդ.*
*Է՛ և յիս սիրտ, ուսեր ի վրէժ:*

ՀԱՍԱՆ

*Թէ զարև նորա հատից, զի՞նչ անտի շահ.*
*Բիւր ժանտագոյնք բողբոջեսցին կալ վրէժխընդիր.*
*Եւ թէ՝նդ հըզօր Դերենկան սրով*
*Գուրգէն և ես անկցուք տապաստ,*
*Զմեր վրէժ խընդրեսցէ ո՞: (կրկ. բազում անգամ):*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Բողբոջեսցին յական քըթթել ճետք ի պատուհաս*
*Անիրաւին՝ որ զԱրծրունիս դարձոյց յաւեր,*
*Զարթիցեն սերունդք անմահ քաջաց.*
*Թող յարիցեն և բիւր ժանտագոյնք,*
*խամրեսցին ի բողբոջս իւրեանց.*

---

1 *Յարմարեալ ի* Duetto dell'opera Marino Faliero. «Se pur giungi» *Տոնիծէզդի երգահանին:*



*Թող յարիցեն՝ ի քըթթելական*
*խամրեսցին ի բողբոջս իւրեանց: (կրկ. բազում անգամ):*
*Նախատանաց Վասակայ զնա՛րդ համբերեր*
*Դերենկան մըտերմին.*
*Անխայես ի կեանս որ խընդրէ զԳուրգէնին:*

ՀԱՍԱՆ

*Ցարենէ զարչիմ:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Թէ ոչ հարցես՝ զի՞նչ շահ:*

ՀԱՍԱՆ

*Արդ զի՞նչ արարից, զի՞նչ կամիս:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ըսպան զոսոխն:*

ՀԱՍԱՆ

*Ո՛հ արիւն, հարկ է հեղուլ:*
(Հասան և Ապուջաֆեր, որէ ելէ մեծանց, երթեն ի նմին ժամանակի):

ՀԱՍԱՆ ի խորհուրդս

*Զայրոյթ, զըրգիռ յաղթեցէք՝ ձեզ լըսեմ,*
*Ե՛հ, ոչ ի նանիր զիս ի վրէժ կարդացէք:*
*Յետին արդ ժամ հընչէ ամպարշտաց,*
*Զօրութիւն անկցի մատնըչաց:*

ԱՊՈՒՋԱՓՐ միայնակ ի նմին ժամանակի

*Լուռ կայ և խորհի մտադիւր զբանս իմ,*
*խոծոծելով զարիւն և ըզմահ.*
*Երեաք ահեղ բարկացայտ,*
*Վառին յարիւն, ցասումն և ի մահ*
*Ի լուր Դերենկան:*

ՀԱՍԱՆ

*Ցընծա՛ Գուրգէն, զուարթասցին Արծրունիք,*
*խայտասցին հովիտք և բլուրք զուարթագին.*
*Ահա Հասան գիցագանց վրէժխընդիր*
*Առ ձեզ գիշխանն ընծայէ Գուրգէն:*
*Սարսեացի թըշնամին ուխտադրուժ.*
*Նախանձ փառաց և սիրոյ կոչէ զիս,*
*Պըսակ անմահ խոստանան հայրենիք,*
*Եւ յետ մահու փառս յաւէժական:*

ԱՊՈՒՋԱՓՐ

Տո՛ւր ձայն, Հասան, քաջաց քոց գլխացանյն.
Սուր և դաշոյն արբեսցին յարենէ,
Մինչև յանդորր հաստեսցին Արծրունիք:
Սարսեսցի թշնամին ուխտադրուժ:
Նախանձ փառաց և սիրոյ կոչէ զևս,
Պըսակ անմահ խոստանան Հայրենիք,
Եւ յետ մահու փառս յաւէժական:
Յընծա Գուրգէն և այլք: (Մեկնին երկոքեան. և է մերձ)
փառս անկապուտ, փառս անկապուտ:

## ՏԵՍԻԼ Ը.

### ՀԱՍԱՆ, ԱՊՈՒՋԱՓՐ, ԱՐՇԻՐ, ՄՈՒՍԷ ԵՒ ՀԱՒԱՏԱՐԻՄՔ ՀԱՍԱՆԱՅ:

ԱՐՇԻՐ

Հասան քաջ, գումարտակ մեծ եկն յերևան ի բլրոյն,
Ջերընգանույ կալեալ ուղի:

ՀԱՍԱՆ

Դերենկան է այն զօկատ.
Ո՛ն, զօրականք, ձայն տուք փողոց, գունդ կազմեցէք համբառմ.
(Հնչեցուցանեն)
Ապուջափր՝ անձնապաշ լեր, առաջարեա ի յառաջն
Զև խոնարհեալ արեգական երեսեսցուք իրերաց:

ԱՊՈՒՋԱՓՐ

Եւ քեզ է վտանգ, թագիր և դու աստ ուրեք:

ՀԱՍԱՆ

Թագեայց ի տեսանել զգործ քաջութեան զօկատիս:

ՄՈՒՍԷ

Տէր իշխան, ամենեքին մեք կազմք ի զէն կամք ձայնիդ:

ՀԱՍԱՆ

Հապա, ընկերք, աշա սոսկն եկեալ հասեալ առ ոտս մեր.
Մարտընչել և ևթ մինայ ընդ սենլքոր վատշուէրս.
Անշուշտ է յաղթութիւն, թէ զԴերենիկ կալջիք ոչ,
ԸզԳուրգէն և զԱշոտ գեթ արասջուք գերեթափ.



Ո՛ն. կացէք ի դարանի, և յաղքատի կերպարանս
Պատեաջիք շուրջ ըզնոսա. ես ի կաշնիւղս կամ դէտ:
(Մտանեն ի դուրան):

## ՏԵՍԻԼ Թ.

### ԴԵՐԵՆԻԿ, ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՊՈՒՄԿԴԷՄ, ՁԻՆՈՒՈՐՔ, ԳՈՒՐԳԷՆ ԵՒ ԱՇՈՏ ի մէջ:

ԴԵՐԵՆԻԿ

Աստ վայր մի դադարեսցուք, վաստակաբեկ յընթացից
Կազդուրեսցին խուռն մի ոգիք և պարտասեալ մարմինք մեր. [ևր.
Կալանաւորք թո՛ղ հանգիցեն. (հայէ ի Գուրգէն.) ո՜հ քանի սեգ յընթացս
Կայ ի շղթայս և համարի եթէ գերի ծս իցեմ:
Այո՛, Սենեքերիմ, բարբառեցաւ կամ հեծեաց
Մինչ չոգար ի գիշերի ունել ըզնա յանկողինս:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Զարմանք կալան զիս ոչ զպյրոյթ անդ և ոչ ձայն հեծելոյ.
Խրոխտապանծ միայն աչօք յերեսս իմ պիշ հայեցեալ,
«Կարծէի, ձայնեաց ոըխուր, իբր առ եղբայր առ նա գնալ.
Ուրեմն այսպէս ուխտին իւրոյ փութով սըտեաց Դերենիկ»:
Այլ մինչ ոչ յաւել նա բան, զանձամբ արկեալ ըզհանդերձս
Եւ տուեալ ձեռն Աշոտոյ առ զօրականն եկ ի սրահ:
Էր գիշեր աշաւոր՝ ամպք թըլփայորդք տարուբեր
Մերթ ընդ մերթ ըզլուսին ի շառագոյն փոխէին:
Շունք քաղցեալք թափառիկք կաղկանձէին յոդս 'ի վեր,
Եւ լսէր ի հեռուստ խուլ մըռընչիւն բորենեաց՝
Ոչ մի ոք ըզգաց յաւանն ամենեքին նիրհէին.
Աշոտ միայն ճիչ արձակեաց և պընդեցաւ ի շղթայս

ԴԵՐԵՆԻԿ

Ցոյժ բարուք արարեր անել առ իս և զԱշոտ,
Մեծ պարգևք են ի ձեռս իմ ցորչափ կացցէ Մարդաստան.
Իսկ ըզԳուրգէն ի գլուրի կալցյց ընդ հում յատանիս.
Երկիւղ միայն ազգականաց վարեաց հասոյց զիս յայս գործ.
Խոստովանիմ զի հաշտութեան էր և սիրոյ հրաւէրն իւր.
Այլ տէրութեանս յորժամ կասկած այսպէս հարկէ ինձ գործել

Զի՞նչ այլ ինձ մարթ էր առնել. Գուրգէնի և Դերենկան
Ցանգ ընդ միմեանս խառնեցին տոհմք, առ նախանձու մեծութեան:
Եթէ և իմ էր գնացեալ ի հայրենին իւր գաւառ,
Կարծէի՞ր թէ անխայէր զեւր ձեռն յարիւն իմ թանալ:

## ՏԵՍԻԼ Ժ.

ԱՌԱՋԻՆՔՆ, ՄՈՒՇԷ է յետ մուրացկէ ... և ԱՐՇԻՐ:

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Տէր իշխանդ, մուրացիկ ոմն:

ԴԵՐԵՆԻԿ

Եւ զի՞նչ ընդ իս և ընդ նա:

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Խօսել ցանկայ ընդ տեառնդ իմում:

ԴԵՐԵՆԻԿ

Քաջ է. ընդ հուպ պարապով:
Իսկ Հասան, ընդէ՞ր Հասան տակաւին ոչ երևի.
Համարէի թէ զօրօք ինձ ընդ առաջ դիմեսցէ.
Զի՞նչ յամենալդ այդ թուիցի, Սենեքերիմ. մի գուցէ...

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Ընդ սիրտ նորա հաւատարիմ կասկածիցե՞ս ինչ արդեօք:

ԴԵՐԵՆԻԿ

Քաջն Հասան անձնենդ պահէ զուխտ իւր առ տեարս. այլ Գուրգէն
Զէ՞ր նորա յառաջագոյն տէր՝ և իշխան մրտերիմ:
Ո՞ յերկուցունցս արդեօք իցէ սրտի նորա պաշտելի:

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Եւ այլ ոմըն մուրացիկ:

ԴԵՐԵՆԻԿ

Եւ զի՞նչ, գաւառս Աշըադայ
Մուրացկանաց եղև օթևակ. ի բաց վարեա՛ զայնպիսիս:
(Հայեցեալ ի Մուշէ):
Մուրացկի ցուպ և հանդերձ, աչք և երեսք չար հինի.
Է՛, ուստի՞ իցէք, չէք ձեր լուեալ թէ իշխանն
Վաստակաւոր մարդկան տայ վարձս և ոչ արանց վատթարաց:



ՄՈՒՇԷ

Արդարև:

ԴԵՐԵՆԻԿ

Սենեքերիմ, ի դէմս և յաչս արանցդ այդ
Ոչ մուրացկի են կերպարանք. ո՞վ իցէք դուք:

ՄՈՒՇԷ

Մուրացիկք:

ԴԵՐԵՆԻԿ

Բարի է. այժմիկ փութով տաց ձեզ ուտել յուտանիս.
Ապուռկդէմ կալ ընդդուռ ի դիպահոջ մինչև անդ:

ՄՈՒՇԷ

Առ ի՞նչ տէր, պատիժդ այդ խիստ հրապարակաց քոց անյանց.
Զի՞նչ մեղաք զի ի շղթայս հրամայես արկանել:

ԴԵՐԵՆԻԿ

Արձակեցից եթէ անպարտ գտջիք յապայս. զի՞նչ փողդ այդ.
(Նկատելով զԱրշիր)
Կալարուք ըզվատշուէրսդ, են պաճուճեալ լոկ լըրտեսք:

ԱՐՇԻՐ

Թող ինձ ասել բան մի և եթ. եղջիւրըս այս ազքատին
Եթէ յանկարծ ի հովիտս այս մոլորիցիմք թափառեալ,
Ի հընչիւն իւր մեզ հանէ ամբոխ մարդկան, որպէս արդ:
(Հնչեցուցանէ · ...):

## ՏԵՍԻԼ Ժ

ԱՌԱՋԻՆՔՆ, ԵՒ ԶԻՆՈՒՈՐՔ ՀԱՍԱՆԱՅ որ խառն ընդ նոսա:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Դաւ է այդ, իշխանդ ըզգոյշ լեր անձին քում:

ԴԵՐԵՆԻԿ

Զօրականք,
Հըռկեցէք, մի իցէ զ՚ի կապելոց ոք զերծցի.
Հարէք ուժգին մի երկընչիք. ո՛ անօրէնք:

ՄՈՒՇԷ

Մեռի՛ր, ժանտ:

ԱՐՇԻՐ

Փըրկեցէք ըզԳուրգէն :

ԳՈՒՐԳԷՆ

Ապուշկըդէմ, լո՛յծ զկապանս .
Տո՛ւր ինձ զէնս զի մարթացայց փըրկել ըզկեանս Դերենկան
Պաշտելիմ թախանձանօք :

ԴԵՐԵՆԻԿ

Մարտեցու՛ք քաջութեամբ .
Այլ ըզգոյշ . . . ահա զմանուկն յափըշտակեն՝ զօրականք :

ԱՇՈՏ

Հայր իմ, ո՛ւր վարեն զիս :

ԳՈՒՐԳԷՆ

Ա՛խ որդեակ իմ, որդեակ իմ: (Գնայ Դերենիկ և Լուսին) :

## ՏԵՍԻԼ ԺԲ.

ՀԱՍԱՆԵԱՆՔ, ՀԱՍԱՆ, և Այլոց զինուորեալք նոցանէ .
(յերգ և յերաժշտական փողիս [1]) :

ՊԱՐ

Արդ չև Հասեալք ի կատարած ,
Առ դուրս անշուշտ է յաղթանակ .
Սուսերք Հատու սուրբ յարենէ
Համակ կարմիր փողփողեսցին ,
ՅՈրսիրանից ի Հագամկերտ
Ճանապարհ յորդ է զինուց .
Զէնս առէք ո՛ն միագումար ,
Խրախուսեսցին զօր մարտիկք .
Ի կռիւ ո՛ն ի կռիւ : (կրկ.)

ՀԱՍԱՆ

Արդ , աջակիցք , շըղթայք խըզեսցին
Մանկան քաջին Աշոտոյ
Եւ խըմբեսցի տօն փըրկութեան

1 Յարմարեալ ի պարն Coro dei guerrieri nell' Opera il Trovatore, « Or coi dadi » Վերդի երգահանին :



Ժողովեսցուք ապա սահմանել
Ի մուտս արփւոյն՝ զի՞նչ անկ մեզ առնել:

ՈՄՆ Ի ՊԱՐՈՒՆ

Թէ ի կռիւ կամք աստէն :

ԱՅԼ ՈՄՆ

Աստ գըտցուք ի ժամուն :

ՊԱՐ

Ի լերանց ի լերանց բարձանց
Ըզգօրս գոչէր Գուրգէն քաջ
Ի գուպարած , յառ և յապուռ .
Դիմեցին առ նա որդիք , արի որդիք
Ազգաց ըռնաւ Հիւսիսայնոց : (կրկնէ):
Ի ձայն քաջին Հասանայ
Խայտան ոգիք և սուսերք :
Ի յոյս անթառամ
Բռաբիոնք պահին շըքեղ՝ փարթամ աւար
Եւ թշնամի ակընկոր : (Կրկնէ բոլորն անգամ):
Ի լերանց ի լերանց և այլն : (Գնալով) :

ՎԵՐՋ Ա. ՀԱՆԴԻՍԻՆ :

# ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

---

## ՏԵՍԻԼ Ա. (Ատեան խորհրդոյ)։

### ԴԵՐԵՆԻԿ, ՍԵՆՆԵՔԵՐԻՄ, ԱՊՈՒՄԿԴԷՄ
(Ցերեկ և յերաժշտական փորձի [1])։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Արդ ուրեմն։*

ԴԵՐԵՆԻԿ

*Զի՞նչ առնել։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Մահ երագ։*

ԴԵՐԵՆԻԿ

*Ա՞յսպէս փութով։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Առ ի՞նչ այդքան երկիւղ. թէ ի խաղմն*
*Ցանկարծ կենացդ հասանէր վտանգ՝ նեբէի՞ր.*
*Զլուա՞ր ի խառնուրդս անդ աղաղակ՝*
*փրկեա՛ զԳուրգէն և զԱշոտ.*
*կեցցէ Գուրգէն, մեռի՛ր իշխան։*

ԴԵՐԵՆԻԿ ԵՒ ԱՊՈՒՄԿԴԷՄ

*կեցցէ Գուրգէն, մեռի՛ր իշխան։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Արդ զի՞նչ մնայ մեզ գործել։*

ԴԵՐԵՆԻԿ

*Ոչ հաւատամ թէ Գուրգէն...*

---

1 *Ցարմարեալ ի* Introduzione dell'opera Marin Faliero *Տոնիծէտ-տի երգահանին*։



ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Դարանիցի՞ կենաց քոց։*

ԴԵՐԵՆԻԿ

*Ընդէ՞ր ոչ նա ձայն եբարձ։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Զանձին պատրուակել ըղձաւանս։*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Բայց ո՞վ զըլուխ գործոյս այսորիկ։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Այսն ոմանք տեսեալ զՀասան։*

ԴԵՐԵՆԻԿ

*Զի՞նչ, համբաւե՞ն տեսեալ զՀասան։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Տեսեալ զՀասան, և ցարդ եւս չերևեցաւ։*

ԴԵՐԵՆԻԿ ԵՒ ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Ո՞ւր գլոցի։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Ի լերինս՝ ընդ աւազակս։*

ԴԵՐԵՆԻԿ

*Դաւեացէ՞ նա զերկիրս հայրենի։*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Այլ ընդ հուպ լուծցէ նա զվրէժ։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Բայց նախ հարկ է մեզ խնդրել զդաւաճանն։*

ԴԵՐԵՆԻԿ ԵՒ ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Ո՞ւր զնա լինել համարիցիս։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Յներենգամնի ի Թաւուսս։*

ԴԵՐԵՆԻԿ

*Գունդ զօրաց անդ ճեպեսցէ։*

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

*Ցետ փորձելոյ ըզԳուրգէն։*

ԵՐԳՔԻՆ ՄԻԱԲԱՆ

Մահ է նըմա թէ յանցանաց
Կացցէ յուրաստ եղկելին.
Ըզգաստակնիք անձին իւրոյ
Ինքնին ձեռամբ իւր գրոշմեսցէ։
  Ո՛վ ժանտ դաւաճան.
Ընդ փոյթ մահուն վըճիռ անողոք
Բարձցէ զգլուխ ամպարիշտ յերկրէ.
Երկիցեն որք զարև Գերենկան
Շիջուցանել խընդրեն նենգութեամբ։
Ծանիցեն որք այդպէս իշխանաց
Ընդդէմ գըլուխ ամբառնայցեն։
Անկցի մահուն յանել տարտարոս
Եւ ջընջեսցի անուն նորա։
Պայծառասցի տոհմ Գերենկան
Ցաւ և յերկիւղ թըշնամեաց։
  Ո՛վ ժանտ դաւաճան.
Ընդ փոյթ մահուն վըճիռ անողոք
Բարձցէ զգլուխն ամպարիշտ յերկրէ.
Փութով ի մահ, փութով ի մահ
  Մատնեսցի Գուրգէն։ (Յետ Երգոյն)։

ԴԵՐԵՆԻԿ

Ճըռընչիւն լսեմ ծըղխնեաց, անշուշտ զԳուրգէն այսր ածեն.
Ոչ գիտեմ որպիսի յոյզք՝ յանկարծ ըզսիրտ իմ խռովեն.
Զէ ինձ մարթ, Սենեքերիմ, կալ և խօսել ընդ նըմա.
Առաջի գերւոյ իմոյ ըզգամ զի շունչ իմ նուաղի։
Դու ինքնին հարցջիր ըզնա, կըշտամբեսջիր և ըզգաւն.
Եւ յորժամ դարձայց այսրէն. զնա ըստ բանից դատեսցուք։

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Եւ ընդէ՞ր զայրն ապստամբ դու հարցանել չհանդուրժես։

ԴԵՐԵՆԻԿ

Մի՛ կարծեր թէ յերեսաց նորա դողամ զերդ մանուկ,
Այլ գորով ՝ ատելութիւն, հեռ և խոխտումն յիս կըռուին։
Իսկ Վասակ ո՞ւր է արդեօք. խընդրակս յըղեալ աստ և անդ՝
Ոչ մի ինչ բերին մեզ լուր։

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Զըոյց ընթանայ ի զօրուն,
Եթէ գընդով ամամբ և ինքն ընդ այլ ուղի խաղացեալ



Գայր իշխանիդ ընդ առաջ վառեալ ի զէն և ի զարդ։

ԴԵՐԵՆԻԿ

Այժմ ճեպել հարկ է, զի գայ. Ապումկդէմ, աստ կացցես։ (Գնայ)։

## ՏԵՍԻԼ Բ.

### ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՊՈՒՄԿԴԷՄ, ԳՈՒՐԳԷՆ, ԶԻՆՈՒՈՐՔ

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Արութեանդ երբեմն հռչակ ընդ համօրէն սփռեալ Հայս,
Տայր կարծել մեզ ըզԳուրգէնդ՝ այր արժանի համբաւոյն.
Եւ իշխան մեր ակն ունէր, յամուր երկրիս տալ քեզ տուն,
Ցոր կէիր խաղաղաւէտ. այլ քանի՜ն պատրեցաք.
Զի՞նչ գըրգեաց ըզքեզ ի դաւն յԵրընդանի անտառին։

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Եւ լուեալ, կաս պապանձեալ աստ յանդիման իշխանիդ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Խայթ խըղճի եղերան, տես, դատապարտ առնէ զքեզ.
Ա՜ռ ի՞նչ կաս անմըռունչ։

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Արա՛ ըզքեզ ամբասիր։

ԳՈՒՐԳԷՆ

Ըզգաւանաց գիտեմ ինչ ոչ, և յարիւն իմ, ո՛ն և ո՛ն,
Խնայէի ոչ ի թափել զիշխանըդ ձեր ի սըրոյ։
Այլ ո՞վ իցէք զի խոխտապանծ բազմեալ յաթոռ ատենի՝
Եւ իշխէք դատել զԳուրգէն ըզպատակիչն Հագարու։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Եւ ժըպրհիս անգոսնել զիս, ո՞չ գիտես զի Գերենիկ...

ԳՈՒՐԳԷՆ

Ճանաչեմ ըզԳերենիկ, արիւն իմ է և սիրեմ.
Եթէ երդմանն գըժեաց սըրբում, մի՛ տէր ի մեզ զայն գրեսցէ.
Իսկ դու, վատ մարդելոյզ, ո՞յսպէս զնորա մանկութեամբ
Այսպն արարեալ և չերկընչիս յահեղ վըժուց Բարձրելոյն։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Յո՜ւշ քեզ, յո՜ւշ. տես ո՞մ կըշռես ըզկըշտամբանսըդ գոռոզ։

ԳՈՒՐԳԷՆ

Գիտեմ այո՛, ո՛վ իցես դու և ո՞ նախնիք քո եղկելիք,
Որ զիմոց հարց փոշի ոտից երկրպագու ջընջէին.
Ե՛րթ և տես, թէ կամիցիս, ի դիւանս տանն Արծրունեաց
Զազգատոհմ Գուրգենի և զքոյ չգիտեմ զի՞նչ խնդրել:
Սակայն ո՞ւր է որդեակն իմ մանուկն Աշոտ՝ իմ կորիւն:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Կորիւն նա. ծընունդ իմի:

ԳՈՒՐԳԷՆ

Ա՞յդպէս խօսիս, անօրէն:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Նա ի գիրկս է Հասանայ, ընդ ամպարիշտ կեցցէ մարդկան,
Այդպիսույ հօր պաշտպանն ի ձեռս նոցին կըրթեսցի:
Եւ ծածկեա՞ զի դաւաճան Հասանայ մասն է ընդ քեզ:

ԳՈՒՐԳԷՆ

Ճանաչեմ ըզնէգն Հասան, այլ ո՞չ այժմիկ սիրելի
Դերենկան և ազատաց և բնաւ երկրին Աղբագայ.
Ո՞չ յերկրորդ գահ իշխանի ամբարձ ըզնա Դերենիկ.
Իսկ առ իմ՞ դրժեալ ուխտին ելեք զիշխան իւր և զտէր:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Զայդ քեզ անկ է քաջ գիտել, և դու առ մե՞զ հարցանես.
Ո՞չ յերէկն էր նա ընդ քեզ դաւաճանել յանտառին:

ԳՈՒՐԳԷՆ

Մի ևս այլ զիս թախանձէք, տարայք անդրէն ի կապանս.
Այդպիսեաց մտաւ բանից պատասխանի չունիմ տալ.
Թէ ունիցի ինչ հարցանել ինքնին գայցէ Դերենիկ.
Արարից նըմա ևեթ պատասխանի, այլում ո՛չ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Երթիցես, այո՛, փութով, այլ և ընդ փոյթ սըրրջասցիս:

ԳՈՒՐԳԷՆ

Բաց ի կենացս՝ այլ ինձ չմնայ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Եւ ո՞չ խիթաս զի բառնամ:



ԳՈՒՐԳԷՆ

Տաղտկացեալ եմ անտի. զիշխանութիւն խընդրել՝
Լո՛կ առ մարթել քեզ նըմանեաց . . .

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Փութով ածէք ի զընդան: (Տանին):
Որքանի՜ գոռոզութիւն, այլ զամենայն նախատինս
Տոկոսեօք հատուսցէ նա, ցորչափ իցեմ կենդանի.
Ե՛րթ, Ապումկդէմ, ասա ցիշխանն այսըր գալ.
Այլ ահա՝ ինքն իսկ իրացըն խելամուտ դիմէ գայ:

## ՏԵՍԻԼ Գ.

### ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՊՈՒՄԿԴԷՄ, ԴԵՐԵՆԻԿ.

ԴԵՐԵՆԻԿ

Զի՞նչ ուրեմըն գիտացէք, և որպիսի՞ս խօսեցաւ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Արհամարհեալ զիս և ըզքեզ ըսպառնալեօք յոխորտայր.
Ոչ ներելոյ բան մի ասաց, ոչ անբասիր զանձն առնելոյ.
Բայց գիտասցես զի ցորչափ նա աստ բնակէ յԱրծրունիս,
Երերեալ և մըղեղեալ կործանեսցի տուն քոյին:

ԴԵՐԵՆԻԿ

Ո՞չ յայտնեաց ըզխարդախանս և թէ Հասան էր հաղորդ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Ցուրաստ կայր ամենայնի, այլ ժըպիտ չար յաչըս իւր
Ըզսըրտին դառնութիւն յայտ յանդիման քարոզէր.
Մանուկ ըզքեզ կոչելով զառոյգ հասակդ խաղ առնէ:

ԴԵՐԵՆԻԿ

Եւ զպարտեացըն լուծցէ վրէժ. տոհմ Դերենկայ ոչ երբէք
Ցորչափ իշխեաց գաւառիս, նախատանաց ինչ տարաւ:
Զի՞նչ թուի քեզ, Սենեքերիմ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Բառնալ ըզնա ի կենաց:

ԴԵՐԵՆԻԿ

Ո՞րպէս:

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Դեռ մահու արբեցուցեալ։

ԴԵՐԵՆԻԿ

Ասէ՛ ի գաղտ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Եւ զի՞նչ գիւրին քան ըղձանկել. համբաւեսցուք թէ իշխանն՝
ծնեալ ի կեանըս Գուրգենի, ի խաչի վանս արդ փակէ.
Եւ ի գինի ընթրեաց իւրոց, յանդէտս և իւր պահպանաց,
Տաց խառնել ըղթոյն մահու. ապա հարից նշան թըմբկաւ
Զի կազմ կացցեն ամենքին երթալ յՕսի՛ ի սուրբ խաչ։
Եւ ցԱպուջափր ասացից առ ի պատրել և ըղնա.
Եթէ վաղիւ ընդ արշալոյսն, մինչ ի լերանց փայլէ շող,
Ըսպանցի Գուրգէն սըրով, և թաղեսցի ի բանտի.

ԴԵՐԵՆԻԿ

Այդպէս լիցի։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ապումկդէմ, ասա կոչեսջիր զԱպուջափր։

ԴԵՐԵՆԻԿ

Իսկ թէ ի զօրն հըռչակեսցի թէ սպան զԳուրգէն դեղ մահու.
Ո՞չ համարիս զի յարիցէ խռովլ ի խուժանն ոստանիս.
Զի են են...

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Եւ երկընչիս իբրև զմանուկ ոք անփորձ.
Ո՞չ դու լցես Դերենիկ։

ԴԵՐԵՆԻԿ

Երկընչե՛լ. թո՛ղ մեռցի։

## ՏԵՍԻԼ Դ.

### ԴԵՐԵՆԻԿ, ՍԵՆՆԵՔԵՐԻՄ, ԱՊՈՒՄԿԴԷՄ, ԱՊՈՒՋԱՓՐ

ԴԵՐԵՆԻԿ

Պատուէր է քեզ, Ապուջափր, զի չև արփւոյն ճըչողեալ,
Գուրգէն խողխողեսցի և ի բանտի թաղեսցի.
Ի լսել քո զձայն թըմբկին, եկեսցէ ի գլուխ հըրամանն։



ԱՊՈՒՋԱՓՐ

Ո՛չ անկցի բան մի յերկիր։

ԴԵՐԵՆԻԿ

Անձն ընդ անձին փոխանակ։
Որպիսի՛ ճակատագիր, և յոչ կամս իմ վարէ զիս։

## ՏԵՍԻԼ Ե. (Անպար)։

### ՀԱՍԱՆ ԵՒ ԻԻՐՔՆ է խորհուրդ դաւաճանաց

(Ցերեկ և յերաժշտական փորձիւ [1])։

ՊԱՐ

Արփին ի մուտս։

ՀԱՍԱՆ

Ա՞ստ իցէք։

ՊԱՐ

Ըստ հրամանիդ։

ՀԱՍԱՆ

Արդ ժամ է։

ՊԱՐ

Ցերդումն ուխտի, ի վրէժ արեան
Բորբոքին սիրտք, ձեռք զըրանմ։

ՀԱՍԱՆ, ԱՃՈՏ

Կեցցէ Գուրգէն։

ՊԱՐ

Զարդարութեան ուխտի հաւատս
Դարուց ի դարս պատմեսցեն
Շիրիմք քաջաց և մահարձանք։

---

1 Ցարմարեալ ի պարն Congiura nell'opera Ernani, « Viva Augusta » վէրտի երգահանին։ Զիմաստս բառից պարուս առանց թարգմանելոյ, ազատօրէն առեալ է մեր ուրեք ուրեք, առ ի պահել ըզզօրութիւն եղանակին։

ՀԱՍԱՆ

Եւ լցե՛ն աստ ամենքին։

ՊԱՐ

Չիք ոք ի մէնջ վատ և մատնիչ։

ՀԱՍԱՆ

Արդ զոր խորհիմս հանից ի վեր․
Խնդրէ ըզմահ մեր Դերենիկ։

ՊԱՐ

Շիջցի անկցի յերկիր իբրև ջահ,
Որ զԱրծրունի հօզոյն ըզփառս արհամարհեաց․
Վառեսցին համայն բազուկք,
Համայն բազուկք աստ ի զէն։

ՀԱՍԱՆ

Շատ է միոյն,
Բաւէ՝ սահմանեսցէ որում աջոյ լցէ անկ։

ՊԱՐ

Հա՛պա, պատրաստ իւրաքանչիւր
Կալ վրէժխնդիր, կամ անկանել։
(Արևմտեան կէճակս գրեհակէ վերայ տախտակոյ, և ապա հանէ զէն յայնկոյսէ Հասան)։

ՊԱՐ

Ո՞ւմ եւ վիճակն։

ՀԱՍԱՆ

Աշոտայ։

ՊԱՐ

Մանո՛ւկ քաջ։

ԱՇՈՏ

Ո՛հ, քանի՜ ցնծութիւն է սրտիս․
Հայր իմ, ո՜հ հայր իմ։

ՊԱՐ

Թէ անկցիս, ընդ հուպ լուծցէ՝ զվրէժ լուծցէ Դերենիկ։

ՀԱՍԱՆ

Ինձ, մանուկ դու, յանձն արա զգործդ։

ԱՇՈՏ

Այսքան զիս վատ, ալևորդ, կարծես։



ՀԱՍԱՆ

Զաւուրս կենացդ, զիմ ծոխութիւն քեզ ընծայեմ։

ԱՇՈՏ

Ո՛չ։

ՀԱՍԱՆ

Ուրեմն եկ, տաց քեզ զհամբոյր յետին։

ԱՇՈՏ

Ո՛չ․ ոչ անկայց նախ քան ըզվրէժ։

ՀԱՍԱՆ

Արդ ծանիր, մանուկ քաջ, զի ի ձեռաց քոց
Շանթեսցէ վրէժ ահաւոր։

ՊԱՐ

Օ՛ն, ընկերք․ չև ձեռն ի գործ լեալ՝
Կռեսցուք դաշն ուխտի սուրբ երդման․
Դաշն ուխտի, երդումն արեամբ չափ։
Զարթիցէ հըզօր արծուին Աշխարհայ,
Եւ հայրենեաց արի զարմից պայազատք
Խռնեսցին 'նդ թևովք նորին քաջասլաց
Զերանութեան վայելել փառս։
Մասիք և դաշք զմեզ ի բացուստ նըկատեն․
Գուն դիցուք ձեռօք, սրտիւք յարաժամ.
Թըշուառութեան անարգ անուն՝ մի՛ բընաւ
Ի ճակատս մեր դրոշմեսցի ցորչափ կեամք։
Թէ երագ ըզփառաց շարս խըզեսցէ,
Ցիշատակ նոցին անմահ բուսուսցէ
Ի սիրտ որդւոցս մեր ըզնախանձ լաւութեան․
Եւ յետնեսցին մի՛ ի փառաց հարց իւրեանց։
Ցարիցէ պայծառ արև նըշուլիւք
Լուսաւորել զերկնից կամարս հայրենի․
Արծրունիք առատասցի որերօք․
Յաւէտ ցընծալից՝ կեցցէ ի փառս։ (Յետ Երգոյն)։

ԱՐՇԻՐ

Ոտնաձայն լըսեմ արանց ի քաղաքէն դէպ առ մեզ։
Ո՛վ, քանի՜ պայծառ գիշեր․ փայլէ լուսին իբր արև։

ՄՈՒՍԷ

Են երկու ողորմ աղքատք, որ ընդ անտառն անցանեն ։

ՀԱՍԱՆ

Կացջիք աստ, Արշիր, Մուսէ, իմանալ ինչ թէ կարէք.
Մեք ճեպեմք յոստանըն կոյս, ընդ գողուղի ճանապարհս
Ընդ աջմէ պատուարին որ ի սուրբ Խաչն հանէ վանս,
Մըտցուք ի քաղաքն. և անդ թողից զոք ի մենջ
Առաջնորդել մինչև յամուրն՝ ուր Ապուջափր զմեզ մուծցէ.
Անդ ի մի ժողովեսցուք, և դու Աշոտ անդ լիջիր ։
Ոչ միաբան շըրջեսցուք, այլ ցան և ցիր ։

ԱՇՈՏ

Եղեց անդ
ի ժամուն. անշուշտ լերուք և զինէն ինչ մի հոգայք ։

ԱՐՇԻՐ

Մուսէ, եկ ընդ ծառովքս կացցուք վայր մի լըրտեսել (գնան ամենեքին)։

## ՏԵՍԻԼ Զ.

### ՄԼԷՃ, ՍՄԲԱՏ, ԱՐՇԻՐ ԵՒ ՄՈՒՍԷ ի դարանէ

ՄԼԷՃ

Լուա՞ր, ընկեր ահաբեկ, զի՞նչ աղմուկ էր յանտառիս.
Ո՞ւր կորեան. եհ, ո՞ւր էք. չիք ինչ երկիւղ զի չեն աստ.
Գիտիցես, աստ՝ Դերենիկ աւազակաց դիպեցաւ ։

ՍՄԲԱՏ

Ո՜հ եղուկ կենաց մերոց, զի զօրն ողջոյն վաստակեալ,
Ոչ մի ինչ բերաք ի ձեռս. այլ ո՞չ լսես զի՞նչ խօշիւն ։

ՄԼԷՃ

Մարդիկք յերկրէ բուսանին ։

ՍՄԲԱՏ

Օ՜ն, խոյս տացուք, մի՛ գուցէ...

ՄԼԷՃ

Խո՞յս տալ. և ե՞ր վասն, այդքան երկիւղ առ իմէ՞,
Իբրու թէ ի ծոցիդ գանձ պատուական ունիցիս ։
(Գտան յերեսն Արշիր և Մուսէ)։



Արդարև երևայք դըժնեայք. ծառայք եմք տեարցըդ շըքեղ.
Աղքատք եմք և անսըւաղ, չիք մեր ումեք մեղուցեալ։

ԱՐՇԻՐ

Իսկ առ ի՞նչ ի գիշերի աստանդական թափառիք ։

ՄԼԷՃ

Իսկ դուք առ ի՞նչ ի զէն վառեալ, միթէ մարդկա՞ն դարանիք ։

ՄՈՒՍԷ

Ո՛վ ուրուկ անպիտան ։

ՄԼԷՃ

Զեմ ես ուրուկ, քա՛ւ լիցի ։

ՄՈՒՍԷ

Արդ սըրովս...

ՄԼԷՃ

Ոչ՝ ոչ խօսիմ, գիտեմ զի էք լաւորեար ։

ԱՐՇԻՐ

Ի յոստանն զի՞նչ լուրք իցեն ։

ՄԼԷՃ

Պատմեն ըզդէպս իշխանին.
Աւազակք, անշուշտ ոչ դուք, յայսըմ վայրի դարանեալք,
Փոքր միւս ես խողխողէին զիշխանըն մեր սիրելի ։
Այլ պաշտեմք, թողէք երթալ, աղքատք եմք մեք նըքողեալք ։

ԱՐՇԻՐ

Կըշռեսցիս վարձս՝ թէ պատմեսջիք զի՞նչ զըրոյցք են զԳուրգենէ ։

ՄԼԷՃ

Խոստովան լերուք ուրեմն՝ եթէ էիք դարանեալք ։

ՄՈՒՍԷ

Ուրուկ պիղծ և արհամարհ. լո՛ւռ կաց, թէ ոչ գլուխ քոյին
Այժըմ ըզհող համբուրեսցէ. սաս զոր քեզ հարցանեմքս ։

ՄԼԷՃ

Այո՛ պատմեցից. բայց աղաչեմ մի՛ այս գըլխոյս իմ փոքրիկ
Առնիցէք երբէք վընաս. զի է միակ և չիք այլ։
Այլ ընդ այլս բանք ճառին. են որ ասեն գնալ ի վանս,
Եւ այլք՝ եթէ յօդըս թըռչի՝ ի մըթութեան գիշերոյ ։

ԱՐՇԻՐ

Եւ լուսն(՞)ք հաւատարաւ. Մուսէ, չէք ժամ յամելոյ.
Օ՛ն, ճեպեսցուք ի յոստանն ։

ՄԼԵՃ առ ընկերն.

Զի՞նչ առ իրեարս խօսին գաղտ.
Սպանանե՞լ արդեօք ըղձեղ ։

ԱՐՇԻՐ

Երթայք ի բաց, չուառականք ։

ՄԼԵՃ

Ե՛, այժըմ ես հրամայեմ. ո՛ր են վարձք մեր, կացէք աստ ։

ՄՈՒՍԷ

Կորիր ի բաց, և ըզգոյշ լեր փոքրիկ գըլխոյդ ։ (Գնան) ։

ՄԼԵՃ

Հնազանդիմ.

Ցորչափ յուսս իմ չարժի գլուխս, լաւ է դառնալ ի քաղաքն,
Եւ ազդ առնել իշխանին եթէ աստ են չարագործքն ։ (Գնան) ։

## ՏԵՍԻԼ Է.

### ԱՇՈՏ (Մենակ).

Հեռացան ամենեքին . . . իսկ ես երդուայ խողխողել . . .
Ո՛չ, չերդուայ զայն . . . այլ երդուայ և եթ փըրկել զիմ ծընող ։
Դերենիկ . . . կեցցէ և նա . կեցցէ և հայր իմ սիրելի ։
Զայս և Գիրք ուսուցանեն, պատուել զիշխանն, սիրել զհայր ։
Անկայց առ ոտըս Դերենկան . թախանձեցից թոյլ առնել
Կապանաց անձակալըդ հօրս՝ որ զնա սիրէ կաթոգին ։
Ո՜հ հայր իմ, ձեռն Աշոտոյ մի՛ ընաւ արեամբ պըղծեսցի .
Ի քաղցր արև քո երդնում, փըրկել ըզքեզ անվըրէժ ։
Այլ աՀա շըշուկ լսեմ. և զի՞նչ լինեն Ապուջափր
Խընդրիցէ յայսըմ ժամու . եթէ զարին . . . ո՛հ սոսկամ . . .
Սակայն պատ ի պատ բանիւք զմիտըս նորա պատրեցից՝
Զի մի՛ խափան ինձ լիցի մըտանելոյ առ հայրն իմ ։



## ՏԵՍԻԼ Ը.

### ԱՇՈՏ, ԱՊՈՒՋԱՓՐ

(Յերգ և յերաժշտական գործիս [1]) ։

ԱՇՈՏ

Զի՞նչ Ապուջափր ի խաւարիս յուզես .
Երթ, խընամ տար հօրս անձկալըդ ի բանտի
Ո՞րպէս արդ կայ նա, եհարց ինչ զինէն,
Ասացե՞ր զի Աշոտ կենդանի է ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Իսկ դու էր յամես .
Թէ ոչ երագ փութաս՝
Խիթամ՝ հօր քո շիջցի արև ։

ԱՇՈՏ

Ո՛վ, զի՞նչ բարբառիս .
Այդքան Դերենկան
Քէն նախնի վըրէժուց
Գազան առնէ զնա ։
Դու մըծ զիս առ հայրս,
Տա՛ր առ Դերենիկ,
Եւ արժանի որդի
Գտայց Գուրգենի ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Իսկ դու քաջացիս
Թէ մուծից առ նա .
Սուր քո այդ արբցէ՞
Զարիւն նորա ։
Դու մըծ և այն ։ (Կրկնել բազում անգամ) ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Ո՞ւր է Հասան ։

ԱՇՈՏ

Դիմեաց յոստանն ։ (Գնայ Ապուջափր) ։

---

[1] Յարմարեալ ի Duetto nell'opera il Trovatore, « Ai nostri monti » Վէրտի երգահանին ։

## ՏԵՍԻԼ Թ.

### ԱՇՈՏ, ՏԻՐԱՆ

ԱՇՈՏ

Ա՛սա, դու Տիրան, և ոչ մի ինչ ըղձացուցեր Աշոտոյ :

ՏԻՐԱՆ

Կայի աստէն ի ծածուկ, տեսանել զի՛նչ անցք անցցեն
Ընդ անձն քո, որ քան ըզքնաւս է վասըն իմ պատուական :

ՈՇՈՏ

Ո՜հ Տիրան, տեղ սայրասուր յամենուստ զիս կեղեքէ.
Դու հօրս հաւատարիմ, և տիօք ինձ համեմատ.
Ե՛կ, միաբան առ Տէր երկնից պաղատեսցուք ի սրտէ :

ՄԻԱԲԱՆ

Առ քեզ դիմեմ ծըփեալ յալիս աշխարհի [1]
Փըրկի՛չ՝ որ կարկառիս փըրկել ըզհեղ նաւորդս :
Առ քեզ դիմեմ որբացելոյն ապաւէն,
Փըրկեա՛ զանգէտս ի յոգնադէմ ի հաղբից :
Առ քեզ դիմեմ որ ըզշուշան խոտ վայրի
Զգեցուցանես բասխտակ և պաղպաջուն :
Առ քեզ դիմեմ, ո՛վ Տէր գըթած՝ միակ յոյս՝
Զքեզ սիրեցից ցորչափ ինձ տացես շունչ :
Առ քեզ դիմեմ. զիմ անձկալի հայր յերկրի
Փրկեա՛ ձեռամբդ և ըզթշնամին օրհնեա :
Առ քեզ դիմեմ, որ յոյս և սատար
Վշտացելոց ես սըրտից :
Առ քեզ անկայց, ցորչափ կեցցեմ
Առ քեզ դիմեմ, առ քեզ դիմեմ:

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԻՆ

1 Յարմարեալ յերգն « Io t'amerò » Գամբանա երգահանին :

# ՀԱՆԴԷՍ ԵՐՐՈՐԴ

Բեմն մթին : — Կանթեղ աղօտալոյս :

## ՏԵՍԻԼ Ա.

### ԳՈՒՐԳԷՆ մենակ :

Զամաց և ըղձարուց երկարութեամբ գլէ գիշերս.
Հընչէ սյահն ահա երկրորդ, և թուի թէ ամք սահեցան :
Ո՜հ, ո՞ւր ես Աշոտ, ո՞ւր որդեակդ իմ սիրելի.
Արտասուք ոչ բաւեցին լընուլ զայս սիրտ ծարաւեալ.
Մի՞ փըրկեաց ըզքեզ Հասան. թէ սուր հընձեաց ըզծաղիկդ...
Ո՜հ, սոսկամ... հա՛ր զիս, ո՛վ Տէր, այլ զորդեակն իմ զիմ աշխ
Պաշտպանեա՛ ընդ սուրբ աջովդ, լեր դու նմին ապաւէն :..
Քանի՜ցս երազք յածին 'ի միտս իմ խոնջ ի մարտից.
Տեսանեմ զգունդս Հագարու, ճակատ կազմեն ամրակուռ.
Պընդակազմ՝ վահանափակ կարգայ և զօրն զեւր Գուրգէն...
Ասա եմ, ո՛վ քաջք, աստ բազուկք իմ և սիրտ արի, ո՜ն ի մարտ : —
Աւաղ, ո՜հ, զի՞նչ են չըղթայքս այս. պարաւանդեալ կամ յարգելս.
Չեմ ես Գուրգէն, այլ ուրուական և սին բստուեր Գուրգէնի :
Ահա բանին դըրունք աղխեալք, տեսցուք զորդւոյս եցէ՞ զրոյց :

## ՏԵՍԻԼ Բ.

### ԳՈՒՐԳԷՆ, ԱՊՈՒՋԱՓՐ

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛վ այր դու, յարև որդւոյդ, ասա ինձ, ո՞ւր է Աշոտ :

ԱՊՈՒՋԱՓՐ

Յարև որդւո՛ցս. այո՛, եղէ երբեմն և ես հայր որդւոց,
Այլ ձեռն անգութ և ապաշնորհ եհար գնոսա ի դաշտի :

ԳՈՒՐԳԷՆ

Ե՞րբ :

ԱՊՈՒՋԱՓՐ

Մինչ կըռուէին ընդ դրօշակաւ Գուրգէնի ։

ԳՈՒՐԳԷՆ

Ընդ դրօշակա՞ւ Գուրգէնի ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Նա՛, աջակից իսկ նըմին ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՜հ, ներեա՛, հայր, եթէ մահու եղէ պատճառ զոյգ ամէից.
Այլ որդեակն իմ Աշոտ քեզ փոխան վարձս հատուսցէ ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Զունիմ պէտս ինչ վարձուց. յիշեա ի մարտն որ յՕսիս
Ընդդէմ հօր Դերենկան՝ զայրըն մարտիկ անձնանուէր ։

ԳՈՒՐԳԷՆ

Դո՞ւ, Ապուջափր ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Այո՛, նա ինքն ։

ԳՈՒՐԳԷՆ

Եւ ո՞րպէս աստ գըտանիս ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Գերի անկեալ Դերենկան, ամք են զի կամ պահ բերդիս ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՜վ հայր աւաղելի, ներեա՛ զի զվէրսըդ բանամ.
Քաջ յիշեմ ըզՍըմբատ և ըզԳագիկ նորափթիթս
Աջակից ինձ ի խազմին. աւա՜ղ, առոյգ խամրեցան ։

ԱՊՈՒՋԱՓՐ ծածուկ արտասուելով

Ո՜հ, որդեա՛կք իմ...

ԳՈՒՐԳԷՆ

Արտասուեմ և ես զարկածըն դըժնեայ,
Բայց ծաղիկ անթառամ զշիրիմ նոցին պսակեսցէ ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Արդ հայր նոցուն զեկուցանէ քեզ իշխանիդ Գուրգէնի,
Թէ արփւոյն ճաճանչից ընդ լուսամուտս չև անցեալ
Հընչեսցէ ժամ քո յետին ։



ԳՈՒՐԳԷՆ

Ո՞ւր է որդեակն իմ Աշոտ ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Եւ հարցանեն զԱշոտոյ. թերևս տեսցես անդ ըզնա ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՞ւր անդ. միթէ մեռցի՞ և նա ընդ իս դատապարտ.
Զէ ինձ փոյթ եթէ յօշ յօշ պատառեսցեն զմարմինս իմ,
Այլ յԱշոտ յորդեակն իմ, ո՜հ, լերուք գըթածք, խնայեցէք ։
Անկայց յոտըս Դերենկան... ո՜հ, ո՞ւր գընաս... բան մի ևս
Կա՛ց, կաց, ո՜վ անողորմ...

ԱՊՈՒՋԱՓՐ գնալով

Ա՛յսքան գըթոտ սակաւին ։

## ՏԵՍԻԼ Գ.

ԳՈՒՐԳԷՆ մինակ ։

(Յերգ և յերաժշտական գործիս [1]) ։

Տիրամայր կոյս, ի վիշտս ամենայն՝
Ինձ հիդիս գըտար միշտ օգնական.
Ցանզաւակ, ո՜հ, հայեա՛ց յեղկելիս,
Մա՜յր կուսածին, մայր կուսածին ։
Արտասուք յաչս՝ քեզ աղերս արկանեմ.
Բարձ զայս կեանս՝ զաւուրըս իմ լի հեծութեամբ.
Մայր լիջիր, մայր դու յերկնից,
Իմ Աշոտոյ լիջիր մայր ։
Մի՛ ի մեղս հայիր հօր,
Անպարտ է որդեակս իմ, կոյս գըթած.
Իմ Աշոտոյ լիջիր մայր ։

1 Յարմարեալ ի Romanza nell'opera Favorita «Spirto gentil» Տոնիծէդդի երգահանին ։

# ՏԵՍԻԼ Դ.

## ԳՈՒՐԳԷՆ, ԱՊՈՒՋԱՓՐ

ԳՈՒՐԳԷՆ

*Երդմնեցուցեալ ըզքեզ ի զէնըս զոր երբեմըն կրեցեր,*
*Ասա ինձ, Ապուջափր, ո՞ւր է որդեակն իմ Աշոտ։*

ԱՊՈՒՋԱՓՏ

*Ա՜յդքան չիջաւ բոց արութեան ի սըրտի քում՝ մինչև լալ*
*Աշխարհել իբր ըզմանուկ. ո՞չ դու իցես Գուրգէնն արի։*

ԳՈՒՐԳԷՆ

*Այո՛. այլ զի՞նչ կըշիռ կայ ՚նդ սէր մարտի և որդւոյ.*
*Թէ եղէր հայր, զայն իմանաս. առ Հասանա՞յ է Աշոտ։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Իցի՜ւ թէ չէր. չես արժանի մեծարանաց քաջի առն։*

ԳՈՒՐԳԷՆ

*Խորշիմ ի դաւանաց, նախամեծար ընտրեմ զքեզ՝*
*Որ երբեմըն զինակից, արդ ի պարտուց կաս ինձ դահիճ։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Այո՛, գըտցի ոք դահիճ, այլ ո՛չ բընաւ Ապուջափր։*
*Աւա՜ղ, Հասան, ըզվաստակեալդ ունայն յուսով լամ ըզքեզ։*

ԳՈՒՐԳԷՆ

*Աշխարհեմ և ես ըզնա՝ որ սուրբ ուխտին իւր դըրժեաց։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Սուրբ ուխտին իցէ՞ դրժել ում եկաց նախ երդմնազանց։*

ԳՈՒՐԳԷՆ

*Եւ ո՞վ այդ։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Դեբենիկ։*

ԳՈՒՐԳԷՆ

*Բայց նա...*



ԱՊՈՒՋԱՓՐ

*Մըռեաց ուխտին իւր անխէթ։*

ԳՈՒՐԳԷՆ

*Եւ ոչ խիթաս ինչ զիշխանէդ այսպէս խօսել համարձակ։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Կա մահապարտ ոք բարբառիմ, առ կապեալ ոք խըռովիչ։*

ԳՈՒՐԳԷՆ

*Ե՞ս խռովիչ։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ո՞չ դու այդպէս կըշտամբեցար և զրուժան։*

ԳՈՒՐԳԷՆ

*Այո՛. այլ ես սուրբ եմ յարենէ։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ուստի՞ յայտ.*
*Ի վաղիւ տապարն հատու շաղախեսցի արեամբ քով*
*Եւ յապայս յիշատակ քո ընդ անօրէնըս գրեսցի։*

ԳՈՒՐԳԷՆ

*Ե՞ս անօրէն... մի՛թէ՞ շըրթունք քո զայս ինձ կեղծ շըփեցին։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Եթէ ոչ անօրէն՝ ապա փառչուէր և անարդ։*

ԳՈՒՐԳԷՆ

*Ըզգոյշ լեր, Ապուջափր, մի՛ նախատեր զկապեալ ոք։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Եւ համբերի՞ց այլ ես լուռ կալ, յորժամ յառնեն դիւցազունք*
*Վրէժխընդիր Գուրգենի, և մարտընչին կենօք չափ,*
*Առանց ամաչելոյ նա արդ փարի ըզծընգովք,*
*Եւ զամենայն հընարի, գուցէ արկանել զոռոզին։*

ԳՈՒՐԳԷՆ

*Ոչ վասն իմ ինչ են պաղատանքդ՝ այլ վասն որդւոյս միայնոյ։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Պաղատա՞նք։*

ԳՈՒՐԳԷՆ

*Եւ զի՞նչ այլ հնար։*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Խողխողել:*

ԳՈՒՐԳԷՆ

*ԶԳերենի՞կ :*

ԱՊՈՒՋԱՓՐ

*ԶԳերենիկ :*

ԳՈՒՐԳԷՆ

*Ո՛հ, սոսկամ. ո՞րպէս քո տեառն առնես սպառ:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ա՞յդպէս և դու դահի՞ճ կոչես ըզմըտերիմդ Ապուջափր:*

ԳՈՒՐԳԷՆ

*Սպանանել ոչ...*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ապա յայնժամ արին Հասան և ընկերք*
*Եւ սիրելի որդիդ Աշոտ անողոք սրով դատեսցին:*

ԳՈՒՐԳԷՆ

*Ա՜յ ամպարիշտք. զի՞նչ արարէք, ո՞ւր արդ իցէ որդեակն իմ:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ընդ դաւակիցս, ընդ իմ ձեռամբ, յարքունիս աստ Գերենկան:*
(Լսելի լինի արտաքուստ ձայն Աշոտոյ):

ԳՈՒՐԳԷՆ

*Ո՞ր է այս ձայն:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ո՞չ ճանաչես:*

ԳՈՒՐԳԷՆ

*Ո՛հ, որդւոյս է, բա՜ց ըզդուռն:*

ԱՇՈՏ արտաքուստ:

*Ապու Ջա՛փր, Ապուջափր:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Մանո՜ւկ չըւառ, պատրեցաք:*

ԳՈՒՐԳԷՆ

*Բաց նըմա, անկցուք գոնեա ի միասին:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Արդ բանամ:*



## ՏԵՍԻԼ Ե.

### ԳՈՒՐԳԷՆ, ԱՊՈՒՋԱՓՐ, ԱՇՈՏ

ԱՇՈՏ

*Հա՛յր իմ:* (Կամի ընթանալ ի գիրկս հօրն, բայց Ապուջափր արգելու):

ԳՈՒՐԳԷՆ

*Ո՛հ որդեակ իմ սիրելի:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Կա՛ց, հեք, այր.*
*Ոչ թողից գըրկախառնել՝ չև միայն խոստացեալ*
*Սրախողխող ի գլխերիս ըզԳերենիկ տապալել:*

ԳՈՒՐԳԷՆ

*Ապուջափր, երդմնեցուցեալ ըզքեզ յիմ սէր, թող արա:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ոչ, ոչ. արդ վասն իմ վըճարեալ է. թէ Գուրգէն*
*Կեցցէ յաթոռն և ես կեցից. իսկ թէ ոչ՝ մահ միայն:*
*Զայսքան ամս յարիւն ի՛ի քիրտըն ծախեցաք ըզմեր կեանս,*
*Արդ անվրէժ կարկառեսցուք զպարանոց մեր թըշնամւոյն.*
*Արեան որդւոցըս գեղափթիթ, արեան նոցին արդ գոչէ*
*Ի դաշտէ ուր ննջեցին, գոչէ վրէժ մոլեգին:*
*Երդուիր, ապա՝ եթէ ոչ և որդիդ քո այս Աշոտ*
*Մատնեսցի ընդ մեզ ի մահ. ես տաց ըզնա իշխանին:*

ԳՈՒՐԳԷՆ

*Ցընորիմ, Ապուջափր, զի՞նչ քեզ մեղաւ որդեակս իմ.*
*Թէ խընդրես վրէժ արեան, ահա հա՛ր գլխս, կամ պատրաստ.*
*Այլ ընդէ՞ր մեղանչես դու ի պատանեակդ այդ անմեղ.*
*Ո՛հ, թո՛ղ ըզնա, և ապրեցո:*

ԱՊՈՒՋԱՓՐ

*Ոչ լըսեմ բնաւ:*

ԱՇՈՏ –

*Ապուջա՛փր:*

ԱՊՈՒՋԱՓՐ

Մի՛ ես այլ...

ԳՈՒՐԳԷՆ

Ա՛յ անգութ՝ ո՛վ, տար մատնեա՛ զորդեակն իմ,
Այլ Գերենիկ ոչ քան ըզքեզ գըտցի գաղան վայրենի։

ԱՊՈՒՋԱՓՐ

Այդպէս առ ոտն հարկանես զարեւ քոյոց մըտերմաց.
Տես թէ քանի՛ իցէ դառն... (Ձգէ զսուրն և խոյ տայ սպանանել զԱշոտ)։

ԳՈՒՐԳԷՆ

Կա՛ց, ամպարիշտ...

ԱՇՈՏ

Խընայեա՛։

ԱՊՈՒՋԱՓՐ

Ո՛ն երդուիր ըսպանանել ըզԳերենիկ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛չ կարեմ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Յայնժամ...

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛հ Ապուջափր։

ԱՇՈՏ

Հա՛յր իմ...

ԳՈՒՐԳԷՆ

Այո՛, երդնում ես.
Ի սէր որդւոյս իմ երդնում կամ մեռանել կամ զեղխանն...

ԱՊՈՒՋԱՓՐ

Արդ ա՛ռ զորդիդ, եւ Ապուջափր ծառայեսցէ քեզ յաւէժ։
(Ապուջափր Թողու զԱշոտ. Գրկախառնին հայր և որդի)։



## ՏԵՍԻԼ Զ.

### ԳՈՒՐԳԷՆ, ԱՇՈՏ

(Ցերգ և յերաժշտական գործի [1])։

ՄԻԱԲԱՆ

Ո՛վ տէր, մի՛ ի ձեռաց քոց սուրը
Ըզհայր և զորդի հեք
Թողուր յանողորմ ի ցաւս.
Մեք զանուն քո օրհնեսցուք։

ԱՇՈՏ

Ցրուեա՛ զխորհուրդ ամպարշտի.
Արդարութեամբ վրէժխընդիր
Արեամբ կենօք ցանդ կացցուք.
Աջ քո լիցի հովանի։
(Միաբան). Ո՛վ տէր, մի՛ ի ձեռաց և այլն (Կրկ. երկրորդ անգամ)։

## ՏԵՍԻԼ Է.

### ԳՈՒՐԳԷՆ, ԱՇՈՏ, ԱՊՈՒՋԱՓՐ

ԱՊՈՒՋԱՓՐ

Ամենայն զինակիցք մեր հասին այժմիկ ի յամուրս,
Եւ ընդ դուռըն գաղտնի, այսըր մըտցեն մի առ մի.
Ահա զմուտըն բաղխեն, ի մերոց ոք է անշուշտ։

ՄՈՒՍԷ արտաքուստ

Ապուջա՛փր, Ապուջափր։

ԱՊՈՒՋԱՓՐ

Ո՛վ ոք ես դու։

ՄՈՒՍԷ

Քոյդ Մուսէ։
(Ապուջափր բանայ զդուռնն)։

---

1 Յարմարեալ ի Duetto, « Guarda che bianca luna » Գամբանա երգահանին։

## ՏԵՍԻԼ Ը·

### ԳՈՒՐԳԷՆ, ԱՇՈՏ, ԱՊՈՒՋԱՓՐ, ՄՈՒՇԷ և ամբոխ ի ՀԱՍԱՆԵԱՆՑ

(Երգ և յերաժշտական գործիք [1])։

ՊԱՐ

Պըսակ բոլորեցէք բազմերփեան շըքեղ .
Ի ճակատս անձկալեաց կուսանք Արծրունիք ·
Կապեցէք վառ ի վառ երգօք և պարուք ·
Հըրճուեցին դիւցազունք , Թէպէտ և ի մահ ։

ԱՇՈՏ

Ո՛վ աւուրս ցընծութեան , որդի հօր ի գիրկս ,
Ոչ ևս այլ մեկնեցայց ի քոց ի բազկաց .
Եթէ բանտ և թէ մահ պահիցէ մեզ Տէր ,
Քաղցրասցի յաւէտ որպէս թէ ի փառս ։

ՊԱՐ

Պըսակ բոլորեցէք բազմերփեան շըքեղ
Ի ճակատս անձկալեաց կուսանք Արծրունիք ·
Կապեցէք վառ ի վառ երգօք և պարուք ·
Հըրճուեցին դիւցազունք , Թէպէտ և ի մահ ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛հ որդեակ , լոյս աչաց , սիրոյս պայազատ .
Ես անկայց ընդ սրով , դու կեցցես յամայր .
Կաց պաշտպան դու , Մուշէ , կորեանս սիրելւոյ .
Տէր կացցէ հովանի որբոց անմեղաց ։

ՄՈՒՇԷ

Հայր որդի պաշտելիք , ի զուր այդ երկիւղ .
Թըշնամին խոնարհեալ ընդ հուպ ի յերկիր
Ցիշխանացդ հայցիցէ կենաց իւր շընորհ .
Ցընծացէք զի ընդ ձեզ կըռուին զարմք քաջաց .
Ձեզ պըսակ հիւսեսցեն կուսանք Արծրունիք ։

---

1 Յարմարեալ յեռանուագն Terzetto « Il contento » Գամբանա երգահանին ։



ՊԱՐ

Պըսակ բոլորեցէք բազմերփեան շըքեղ
Ի ճակատս անձկալեաց կուսանք Արծրունիք ·
Կապեցէք վառ ի վառ երգօք և պարուք ·
Հըրճուեցին դիւցազունք , Թէպէտ և ի մահ ։

## ՏԵՍԻԼ Թ·

### ԱՌԱՋԻՆՔՆ, ԱՊՈՒՄԿԴԷՄ

ԱՊՈՒՋԱՓՐ

Լուռ լերուք , ոտնաձայն լսեմ արտաքս . ո՞վ է այն ։

ԱՊՈՒՄԿԴԷՄ արտաքուստ ։

Ապումկդէմ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Աշոտ , Մուշէ , ո՛ն , թագերո՛ւք ... ահա բանամ։

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Այս հրաման է Գերենկան , որ խընդրեալ ի Գուրգէն ,
Ի գիշերիս յայսմ՝ ի ծածուկ ածէ ըզնա ի խաչի վանս ։
Արդ հացիւս և գինւով կազդուրեսցի առ ժամայն ,
Եւ ի հընչել ձայնի թըմբկին՝ անդրէն փութով մեկնեսցի ։
Անձն ընդ անձին փոխանակ ։ (Դնէ անդ վհատն և վճռական)։

ԱՊՈՒՋԱՓՐ

Ըստ հրամանաց քոց եղիցի ։
Ելէք ի դուրս , մի՛ երկընչիք , ահա և այլք բաղխեն զդուռն .
Անշուշտ Հասան է և ընկերքն · ողջո՜յն ընդ քեզ , քաջդ Հասան ։

## ՏԵՍԻԼ Ժ·

### ԱՌԱՋԻՆՔՆ , ՀԱՍԱՆ ԵՒ ԻՒՐՔՆ

ՀԱՍԱՆ

Ո՛հ իշխանդ իմ Գուրգէն ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛վ սէգդ Հասան , ո՞րպէս կեաս ։

ՀԱՍԱՆ

Կեանք մեր ու արիւն քեզ են ի ձօն, կամ մահ և կեանք միաբան ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Հրաման է իշխանին զի խաչի վանս երթիցէ ։

ՀԱՍԱՆ

Յուրտ դիակըն Գուրգենկան ընդ հարս Նընջել տարցի անդ ։
Այլ երթ դու, Ապուջափր, տես զինչ զօրացք ի բերդին ։
(Գնայ Ապուջափր) ։

## ՏԵՍԻԼ ԺԱ.

### ԱՌԱՋԻՆՔՆ, բաց յԱՊՈՒՋԱՓՐԷ

ԱՐՇԻՐ

Արս ի մենջ գէտ կացուցի ի քաղաքի և ի խրամս,
Զի թէ վտանգ ինչ հասցէ՝ մեզ ի թմբկունս ծնուցեն ։
Սակայն նախ լուծցին շղթայք իշխանին մեր Գուրգենի ։
([illegible]) ։

ՀԱՍԱՆ

Ամենեքին սուքա, իշխան, վասըն կենաց քոց մարտիցեն . . .
(Լսելի լինի ձայն թմբկի) ։

ԱՇՈՏ

Ո՛հ, նըշան է ձայն թմըբկիս մեկնելոյ մեզ դէպ ի վանս ։

ԳՈՒՐԳԷՆ

Այո՛, որդեակ, և կամէի զընալ ևթէ . . .

ՀԱՍԱՆ

Զեր երդուեալ
Խոզխողել ըզԳուրգենիկ, զայդ ընդ որդւոյդ, զի և նա
Երդուեալ ընդ քեզ մըխել ըզսուր . լիցի կըցորդ և Հասան ։

ԳՈՒՐԳԷՆ

Եւ Աշոտ երդուեալ ընդ իս . ապա մի այլ ոք գայցէ .
Ես և նա միաբան մընասցուք ի սրահ իշխանին .
Ա՞յդքան երկչոտ համարիցիս ըզզօրապետըդ Գուրգէն ։

ՀԱՍԱՆ

Հա՛պա ի գործ ժըրաջան . հասցէ այժմիկ Ապուջափր
Ըզդրունս բանալ մեզ ազխեալս ։



ԱՇՈՏ

Կազդուրեսջիր, հայր, ըզքեզ
Դիպըն հացիւս և գինւով, զի ի վաղուց կաս անսուաղ ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛հ որդեակ իմ, յագեալ եմ ես ի վըշտաց ։

ԱՇՈՏ

Հայր, արբ զայս ։

ԳՈՒՐԳԷՆ [illegible]
Այո՛, առից, որդեակ, հեղուլ նըւէրս յարև կենաց քոց
Եւ կենաց ամենեցուն . տայցեն երկինք եղիւ թէ
Ինձ յաւէտ ուրախութիւն . . .
(Ապուջափր [illegible]) ։

## ՏԵՍԻԼ ԺԲ.

### ԱՌԱՋԻՆՔՆ, ԱՊՈՒՋԱՓՐ

ԱՊՈՒՋԱՓՐ

Դեղ մահու է ի բաժակդ ։

ԱՄԵՆԵՔԻՆ

Դե՜ղ մահու ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Այո՛, դեղ մահու ։

ԱՇՈՏ

Վա՜յ ինձ, ո՛ հայր ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛վ որդեակ ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Ի հընչել աւհեղ թըմբկին, մինչ ամենայն ոք կարծէր
Ի խաչի երթալ ի վանս, կապարճակըրն անդ երեսք
Զուարթացան . և լըրաբեր իմն հեղնելով զզօրականն,
Ասէ, կանխեաց նա քան ըզձեզ գընալ դեղով յերկրի վանս ։

ՀԱՍԱՆ

Ո՛ն ի վրէժ ։

ԱՐՇԻՐ

Սուրս այս մըտցէ տամնիցս ի սիրտ Դերենկան ։

ԳԱՐ

(Ցերգ և յերաժշտական գործիս [1]) ։

Մինչև ցե՞րբ թողցուք ոսոխին
Առաթուր հարկանել ըզմեզ .
Մինչև ցե՞րբ կենաց մերոց
Դարանիցի դեղով և սրով ։ (Կրկնէ)
Ո՞ւր նենգաւոր , ահաւոր ո՞ւր ։
Երդնումք սուսերբ ի վրէժ ։ (Կրկնէ բազում անգամ) ։

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԻՆ

1 Յարմարեալ ի պարն Coro nell'Opera La Vestale, « Spargiam » Մերգատանդէ երգահանին ։

# ՀԱՆԴԷՍ ՉՈՐՐՈՐԴ

Սենեակ Իշխանական

## ՏԵՍԻԼ Ա.

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ միայնակ

(Ցերգ և յերաժշտական գործիս [1]) ։

Զուարթ աւուր աւետիս
  Հընչես սոխակ քաղցրիկ .
Երգեա թըռչնիկդ երգեա
  Յանոյշ ի վարդից ։
Արփին ահա ծագեցաւ
  Ահա խընդայ բնութիւն ,
Առէք գեղգեղ զուարթ
  Հաւուց բոյլք ո՛ երամք ։
Հոսէ այգուն ցօղ բիւրեղ
  Հոսեն և սօսք բիւր կայլակս ,
Առէք գեղգեղ զուարթ
  Սոխակք անտառաց ։
Այլ պերճ աւուրք սահեսցին ,
  Անցցէ գարուն երագ .
Ահա կենացդ արփի , մանուկ ,
    Առ գեղգեղ .
Ահա սահի , ահա էանց ։

1 Յարմարեալ յառանձնակն Souvenir di Londra Գամփանա երգահանին ։

## ՏԵՍԻԼ Բ.

### ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՊՈՒՄԿԴԷՄ

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Զի՞նչ խնդրես, Ապումկդէմ, ի խաւարին այս ժամու:*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Կարևոր զըրուցաց պատգամաւոր գամ առ քեզ:*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Եւ զի՞նչ այն:*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Ուղևորք թափառելով յանտառին,*
*Դիպեալ առեն աւազակաց՝ և յըրտեսեալ ըզտեղիս.*
*Երընդանեայ ի կողս լերանց առեն լուեալ ողբս և ճիչ:*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Եւ զի՞նչ կարծես զայդոսիկ:*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Գուցէ Վասակ ի թաւուտս...*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Ըմբռնեա՛լ ի նոցանէ. ո՜հ երկբայիմ, իցէ՞ մարթ*
*Զ'այնչափ զօրօք մեկնեալ Վասակ՝ ի ձեռս անկցի սակաւուց:*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Զհասանայ փորձ քաջութեան զխոէ աշխարհս համօրէն.*
*Բայց աստ կան արքդ այդոքիկ և թէ կամիս մեծից այսր:*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Աւաղ ըզգո՜յշ, գուցէ զըրնով անկեալ իշխանն զարթիցէ:*
*Ո՜հ, քանի՞ երկարեցաւ ինձ գիշերս այս սոսկալի.*
*Կա՛ց, ո՜վ Ապումկդէմ. զըաւեա՞ց ըզկեանըս Գուրգէն.*
*Ահա պահ մի զի բսպասեմ և չերևի Ապուջափր:*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Ըզգեղ մահուն ես ինքն ածի, արդ ի բանտին է լռութիւն.*



*Եւ այսքան դանդաղել Ապուջափրի գալ առ մեզ*
*Է նըշան թէ ի ծածուկ անդ ի բանտի թաղէ զդին:*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Արդ մարթ է քեզ զուղևորսըն մուծանել լռելեայն:*
(Գնայ Ապումկդէմ):
*Յետ մահու Գուրգէնի՝ չէք իմ ուստեք այլ երկիւղ:*

## ՏԵՍԻԼ Գ.

### ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԱՊՈՒՄԿԴԷՄ, ՄԼԷՃ, ՍՄԲԱՏ

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Ահաւասիկ զոր ասէի:*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Զի՞նչ պատմէք դուք ուղևորք:*

ՄԼԷՃ

*Բայց իշխանըն չէ սա. մեք խնդրեցաք տեսանել...*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Չէ ինչ փոյթ, Սենեքերիմ է մըտերիմ իշխանին:*

ՍՄԲԱՏ

*Ա՛յլ յորժամ չէ Դերենիկ, կամիմք խօսել առ իշխանն:*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Վատշըւէրք, այդպէս անարգ յաչս ձեր երբէք իցեմ ես:*

ՍՄԲԱՏ

*Քաւ լիցի. այլ և դու իբրև ըզմեզ ես հպատակ:*

ԱՊՈՒՄԿԴԷՄ

*Զի՞ այդպէս բարձրաձայն աղաղակես, լռէ իշխանն:*

ՄԼԷՃ

*Եւ իցի՞ւ թէ:*

ՍԵՆԵՔԵՐԻՄ

*Ի բաց կացէք և երթայք փոյթ, ո՜վ ամբոխմարք:*

ՄԼԷՃ

Ա՞յդպէս ըղձեղ Թըշնամանես ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Վատթարագոյն ևս լցէք ։

ՄԼԷՃ

Արգելէր չաղաղակել և դու ըղձօք անցանես ։

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Ճչուկ լսեմ ի սրահին . ա՛յ եղկելիք , զարթեաւ նա ։

## ՏԵՍԻԼ Դ.

### ԱՌԱՋԻՆՔՆ , ԴԵՐԵՆԻԿ

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ընդէ՞ր , իշխանդ , յարեար փութով , ըստ հրամանիդ էի աստ ։

ԴԵՐԵՆԻԿ

Շնորհ ունիմ, Սենեքերիմ. այլ զաչս հազիւ կափուցեալ
Եւ ահա խեկոյն յառնեն կանգնին տըժգոյն ուրուականք .
Յապալէր գահավիժին լսեմ ըզգոռ խառնաձայն ,
Իբրու թէ զէն ի ձեռին յիս դիմագրաւ խուժեսցեն ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ո՛հ , տակաւին խօլականաց ըզըրաղեալ կաս ի տեսիլս .
Հերքեա՛ ի բաց ի սըրտէդ , տես զի՞նչ մնայ մեզ առնել ։

ԴԵՐԵՆԻԿ

Եւ կամէի ... բայց ընդէ՞ր աստ կան սոքա , զի՞նչ խնդրեն ։

ՄԼԷՃ

Իշխան՝ է մեր բան ընդ քեզ յոյժ կարևոր ։

ԴԵՐԵՆԻԿ

Եւ զի՞նչ այդ ։

ՄԼԷՃ

Յանտառին Նըրընդանեայ դիպաք երկուց չար հինից .
Նա մանաւանդ բազմաց խակ՝ զի և լըւաք զձայն նոցա ։
Ապա յստամն կոյս ճեպեցին . մեք ըզկերանց քերելով կոզս ,
Լուաք ձայնս յալուց ուստեք թէ ով և էք՝ առ իշխանն



Հասուցէք բան , զի Վասակ և զօրականն ընդ նըմին ,
Ի դարափոս աստ ի ծործորս կան կաշկանդեալ ի շղթայս ։

ԴԵՐԵՆԻԿ

Վասա՛կ ի փտանգի ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Եւ զի՞րդ այս ։

ԱՊՈՒՄԿԴԷՄ

Մատն Հասանայ ։

ԴԵՐԵՆԻԿ

Օրհնեալըդ դու ուղևոր և գիտիցե՞ս ըզտեղին ։

ՄԼԷՃ

Այո՛ , տէր , և մարթ է մեզ կալ առաջնորդ թէ կամիք ։

ԴԵՐԵՆԻԿ

Օ՛ն , փութա՛ , Ապումկդէմ, առ ըզգունդ մի հեծելոց
Եւ դիմեա՛ ընդ սոսա ի փըրկութիւն Վասակայ .
Հրաման տացես և այլ գընդի քեզ ի թիկունս հասանել։
Օ՛ն երթայք , հաւճըրակք , ձեզ վարձք անթիւ ի դարձիդ ։

ՄԼԷՃ

Շնորհ ունիմք իշխանիդ , մեզ չատ է սպաս հարկանել։
(Առ Ապումկդէմ)։
Իմացա՞ր արդ , զի՞նչ խըտիր էր ընդ իշխանն և ընդ ձեզ։

## ՏԵՍԻԼ Ե.

### ԴԵՐԵՆԻԿ , ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

(Ցերգ և յերաժշտական գործեօ [1]):

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ահա՛ թըռչին արագաճեմ առ Վասակ ։

ԴԵՐԵՆԻԿ

Աւա՜ղ , մինչ նա ի թիկունս մեզ հասանէր
Ըմբըռնեցաւ յուղւոյ.

---

1 Յարմարեալ ի Romanza « Se tanta ira » nell'opera Linda di Chamounix Տոնիծէզդի երգահանին ։

Եւ խիթամ գուցէ մնաս ինչ իցեն հասուցեալ
Հաւատարմին վասակայ ։
Գողցես թէ սիրտ իմ ազդէր ի վաղուց՝
Այն ինչ յուղի անկեալ.
Եթէ հաւատս ընծայեալ էր իմ՝
ինքնին ընթանայի յօգնութիւն ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Այլ հիմ երկընչիս, հաւատա՛ զի մահ
Զփարէ Հասան .
Իսկ թէ անգութ սուր ոչ անխայեաց ,
Աւա՛ղ նըմա , աւա՛ղ նըմա .
Երկինք կացցեն վրէժխնդիր.
Ողբամ զվասակ , աւա՛ղ նըմա ։

ԴԵՐԵՆԻԿ

Եթէ այսքան դառն իցէ իշխել
Զարիւն անպարտ հեղլով յերկիր ,
Լաւ էր ընաւ ի գահ չամբառնալ,
Լքեալ ըզբարձ զաւագութիւնս ,
Թափուր անապատ յաղքատին խըչտի
Կեալ միշտ անդորր ի սիրտ ։ (Կրճէ) ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ա՛յդպէս փութով թողուս ըզյոյս .
Միթէ՞ ի զուր ծըգնեցաք .
Ո՛հ ոչ այդպէս անարգ առ քեզ
Ըզփառս համարէի ։
Հողմ է ուժգին , չընչէ երագ ,
Երագ և սէգն անկցի .
Եւ իշխեսցուք անքոյթ ։
Եթէ չիջաւ խանդ պատուոյ ի քեզ
Եթէ ոչ ևս խընդրես ըզփառս .
Լաւ է յայնժամ յանչըքութեան
Լքեալ ըզբարձ զաւագութիւն ,
Թափուր յանապատ յաղքատին խըչտի
Կեալ անդորր ի սիրտ ։

ՄԻԱԲԱՆ ( բազում անգամ )

Թափուր յանապատ յաղքատին խըչտի
Կեալ անդորր ի սիրտ ։



## ՏԵՍԻԼ Զ.

### ՍԵՆՆԵՔԵՐԻՄ , ԴԵՐԵՆԻԿ , ԶԻՆՈՒՈՐ ՈՄՆ

ԶԻՆՈՒՈՐ

Յոստանիս , ով տէր իշխան , ձայն լուեալ յն ընթանայ
Եթէ արք ոմանք դըժնեայք , երևեցան աստ և անդ ։

ԴԵՐԵՆԻԿ

Մի՞ գուցէ գունդն Հասանայ ։

ԶԻՆՈՒՈՐ

Ոմանք պընդեն և զՀասան
Տեսեալ ուրեք յայլակերպս ։

ԴԵՐԵՆԻԿ

Զի՞նչ իցէ այս , Սենեքերիմ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ե՛րթ , տուր ձայն փութով զօրուն ապարանիցս զգուշանալ.
Մի՛ ուժեք անհրաման յինէն լիցին ելք և մուտք .
Եւ առ ընդ քեզ այլ ևս երիս և հըսկեսցես ի սրահիս ։
(Գնայ զինուորն) ։

## ՏԵՍԻԼ Է.

### ԴԵՐԵՆԻԿ , ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

ԴԵՐԵՆԻԿ

Ա՛յսքան ժպրհել Հասանայ . պատուասիրեալ նա յինէն՝
Եւ բըռնասցի՞ ապարանից իւր բարերար իշխանին ։
Ո՛հ , ոչ հաւատամ, անմարթ թըւի ինձ այդ գործ ։
Իսկ զԱշոտոյ , Սենեքերիմ, գիտացե՞ր ինչ հաւաստեաւ ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Յետ պըրծելոյ նա ի ձեռնջ, այլ ինչ ընաւ ոչ գիտեմ։

ԴԵՐԵՆԻԿ

Իսկ Գուրգէ՞ն ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ապուջափրի ասեն փութով թաղեալ զնա ։

ԴԵՐԵՆԻԿ

Ո՛Հ, աշխարհմ ըզԳուրգէն, զայր այնպիսի ականաւոր.
Արտասուօք ոռոգեցից ըզգերեզման նորա սուրբ:
Այլ Երբ արփին ելցէ առ մեզ, երկարեսցաւ յոյժ գիշերս:

ՍԵՆԵՔԵՐԻՄ (Ի ծածուկ):

Ցի՛նչ հայեն այդպիսի բանք, ըստըրջացա՛ ընդ եղեալս:

## ՏԵՍԻԼ Ը.

ԴԵՐԵՆԻԿ, ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԶԻՆՈՒՈՐ ՈՄՆ, և ԶԻՆՈՒՈՐՔ

ԶԻՆՈՒՈՐ

Զամենայնն ըստ հրամանիդ կարգեալ, ո՛վ տէր, արդ դառնամք:

ԴԵՐԵՆԻԿ

Սենեքերիմ, հանգիր և դու. (առ ալեւորս) աստ կացջիք դուք կալ
Այլ սակայն... ոչ կամիմ ի սենեակն այն առնուլ նիրհ. [ի պահ.
Պատուհանք նորա հային ի լուսամուտս բանտին,
Եւ ոչ կարեմ մըտաբերել ըզյիշատակ Գուրգէնի:
Աստ թող զիս միայնակ, իսկ զօրականն մերձ ի սրահդ:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Թողում միայն, այլ մի՛ վըշտօք տագնապեսցիս: (Գնայ):

ԶԻՆՈՒՈՐ

կամք անդէն:

## ՏԵՍԻԼ Թ.

ԴԵՐԵՆԻԿ (Ի բազմոցի, ի քնոյ):

Ահաւասիկ եմ միայն... ո՞վ էք դուք... ո՛հ պատրանք...
Այլ ըզգամ զի արհաւիրք ըզհետ մըտեալ վարեն զիս...
Զի՛նչ խնդրէք, ո՛վ խօլականք. ո՞վ իցէք դուք, սուր ի բուին
Որ սպառնայք նորապըսակ գըլխոյս իմ մահ ստոյգ.
Օ՛ն ի բաց.., չէք դուք ոգիք... երա՛զ երա՛զ... արեա՞ն վրէժ...
Այլ Գուրգէն չէ ոխակալ... դո՛ւ Հասան յիս սուր մըխես.
Ո՛հ, խնայեա՛ յառաջ հասակս իմ, մի՛ առներ զայդ դու ինձ.
Կա՛ց, զաղէտս իմ պատմեցից, ապա հար զիս թէ չյուզիս.



Ո՞չ լսես ինձ... ո՛հ ցնորիմ. ․․․ մանուկ գըզուեալ հօրս եղէ,
Եւ անփորձ՝ արկի ձեռն յիրաւանսակ վարչութեան.
Ոչ գիտէի թէ մանկութեան հաղբ է լըպիրծ՝ հրամայելն...
Այլ խաբիմ... չէ նա Հասան. զօդըն կոծէ ուժգին հողմ...
Գազանք ամեհիք հրացայտ աչօք յիս վարգին:
Ա՜յ... ո՛վ Տէր... և ուր իցեմ, մի՞ յերազի թէ յարթմնի...
Ըզդիակըն Գուրգենի ածեն կոծով ի չիրիմ.
Ողբս առէք, գուսանք Հայոց, լացէք հասակք աղածրիք.
Օ՛ն և օ՛ն Գուրգէն՝ ոչ ես, էր այլ ոք ժանտ... ո՛հ աղէտք.
Իցի՛ւ թէ ոչ ազդէր քեզ դեղըն... մարդասպա՞ն... ես սպանիչ.
Ո՛հ մի՛ չըփեր յիս զայդ մըրուր. օ՛ն, արի եկ ի գիրկս իմ.
Այլ զի՛նչ իցէ արիւնդ այդ. խաւար մահու զաչս իմ պատէ.
Օ՛ն ինձ տեղ և ապաւր, ո՞ւր է սուրն իմ սատակիչ.
Ցուցից ձեզ զի մահուանէ ոչ խորշիմ ես, ո՛վ անգութք.
Այլ ո՞վ զգաշըյնս իմ ունի, աղէ՛ թողէք ըզթըշուառս,
Եղո՛ւկ քեզ, Դերենիկ, եղ դու քեզէն ընդ սուր քո:
(Անկանի ի բազմոցէ ի գետն, և փոխանակ աղօթս խօսելոյ, առնէ ոտորն ի բաց):

## ՏԵՍԻԼ Ժ.

(Դերենիկ ընկողմանեալ է խորս տեառրանին: Գուրգէն մտանէ բանտ յառաջադեմ. աղաղէ զՀասան և զայլս ...ալ առ դուռն, և ընդ ընդ Աշոտայ, առոր ի յետևն, մտանէ և ողջէ զաղտ յառաջանն):

ԳՈՒՐԳԷՆ, ԱՇՈՏ, ԴԵՐԵՆԻԿ

ԳՈՒՐԳԷՆ

Կա՛ց, Աշոտ. աստ կաց անձայն, մի՛ յառաջեր... ննջէ նա:

ՈՇՈՏ

Հայր իմ, իսկ դու...

ԳՈՒՐԳԷՆ

Շատ է, լուռ լեր... կացջիր աստ պահ սենեկիս:

ԱՇՈՏ

Եւ սպանցես... երդուայ և ես, իսկ թէ անպարտ իցէ նա...

ԳՈՒՐԳԷՆ

Տեսցես ընդ հուպ, ո՛վ որդեակ, զիա՛րդ ըզվրէժ լուծից ես: (Յառաջէ):
Ո՛վ տէր, ՛սուր զօրութիւն քում ապիկար ծառայի:

ԱՇՈՏ

Շարժի նա․ երեսք համակ այլագունեալ. ո՜հ դողամ։

ԳՈՒՐԳԷՆ

Որդեակ իմ Դերենիկ, ահա Գուրգէն։

ԴԵՐԵՆԻԿ (ցնորեալ)

Ե՛րթ, ըստուեր,
Մի՛ անխնայ հալածեր զիս․ գիտեմ և ես զի մեղայ․
Զարիւն անպարտ . . .

ԳՈՒՐԳԷՆ

Դերենի՛կ, ո՛վ իշխանդ իմ սիրելի։

ԴԵՐԵՆԻԿ

Աւ իս ձեռըն կարկառէ, մեռա՛ւ դեղով․ ․ ․ ո՜հ քըստմնիմ։

ԳՈՒՐԳԷՆ

Ես եմ Գուրգէն։

ԴԵՐԵՆԻԿ

Ո՛հ, զի՞նչ այս ․ ․ ․ ո՞վ իցես դու ․ ․ ․ մի՞ Գուրգէն.
Այլ ո՞չ արդեօք դեղ մահու ըզկեանըս քո ա՛ռ ի քէն։

ԳՈՒՐԳԷՆ

Կամ ողջանդամ, պահեաց զիս Տէր ի մահաբեր բաժակէն։

ԴԵՐԵՆԻԿ

Ո՛հ Գուրգէն, ներեա՛ ինձ․ անխայեաջիր ի կեանս իմ
Քեզ սիրով հնազանդեցայց ցորչափ իցեմ կենդանի։

ԳՈՒՐԳԷՆ

Եւ առ ի՛նչ այդպիսի բանք․ ո՞չ առ ոտիւքդ է դաշոյն․
Օ՛ն, հար զիս եթէ կամիս․ այլ առ իմ՞ ի ծածուկ
Զայր բարեկամ բառնաս յերկրէ․ զի՞նչ քեզ մեղայ Դերենիկ։

ԴԵՐԵՆԻԿ

Ո՛հ ոչինչ․ դու եղիցես ինձ յերկրի հայր և իշխան։

ԳՈՒՐԳԷՆ

Ե՛կ արդ, որդեակ, ի գիրկս իմ․ համբոյրս լիցի գրաւական,
Զի ես գընամ ի Հոռոմս․ դու ժառանգեա՛ զիմ աշխարհ։
Եկ և դու, Աշոտ որդեակ, տալ ըզհամբոյր հրաժեշտի․
Ծանիր յայսպա ըզԴերենիկ քեզ բարեկամ և եղբայր։



ԴԵՐԵՆԻԿ

Ո՛վ դու դիւցազըն, թողո՞ւս զիս։

ԳՈՒՐԳԷՆ

Ցայսօրմհետէ ոչ այլ ինչ
Բայց սոսկ անուն Գուրգէնի, միայն անուն յիշեսցի․
Արդէն դոյզն ինչ էի, որդեակ, աստի և անդր եմ ոչինչ.
Թողում ըզձեզ և մեկնիմ, այլ արտասուօք վըշտահար․
Ինձ տարփատենչ եկաց յամայր գաւառս իմ այս հայրենի։
Եւ թէ երբէք ի հեռուստ հընչեսցէ լուր վախճանիս,
Ո՛հ Դերենիկ մի՛ մոռանար վասն իմ հոգւոյս աղօթել.
Ցոյց լիցի քեզ զի սիրեաց նա զԴերենիկ և զԱշոտ։

ԴԵՐԵՆԻԿ

Եւ խոյա՞ր թողցես զիս․ ո՜հ ոչ ներեմ․ աստ կացցես,
Ի քէն ուսայց և ես իշխել, դու ինձ լիցիս հայր ի կեանս։

ԳՈՒՐԳԷՆ

Մի՛ զիս ի զուր թախանձեր։

ԴԵՐԵՆԻԿ

Գո՛նեա Աշոտ կայցէ՞ ընդ իս։

ԳՈՒՐԳԷՆ

Եւ նա լիցի ինձ ուղեկից։

ԴԵՐԵՆԻԿ

Իսկ արդ բընաւ զըրկեցա՞յց․
Հար զիս յայնժամ, սիրտ անգութ, այդօրինակ քան թողուլ։

ԳՈՒՐԳԷՆ

Կարի բուռն առնես ինձ․ ես և որդեակս մեկնեսցուք,
Այլ գրաւական սիրոյս մեծի քեզ հարսնութեան խընդրեցից
Ցիշխանաց յիշխանէն զդուստըն Սոփի նազելի։

ԴԵՐԵՆԻԿ

Ընդունիմ ըզձեռնըն զայն, որ զօդէ զիս ընդ իշխանին
Եւ վեհանձըն Գուրգէնի․ իցե՜ւ երկինք սըփռէին
Ի շաւիղն ընդ որ գընայք վարդ և շուշան բազմառատ։

ԳՈՒՐԳԷՆ

Լուր, Տէր, ձայնի ծառայի քո, օրհնեա զամոլս աղաւնեաց՝
Զորս ի սըրտէ ի սուրբ տաճար քոյոց կամաց նուիրեմք․

Ընդ աջով քով պահեա զնոսա․ որդւովք բերկրեալ ցընծասցեն․
Պայծառասցի եկեղեցի և հայրենիք խայտասցեն։

(Տրոփիւնք որոտման․ Ապուջափր և Հասան ելնեն)։

ԱՊՈՒՋԱՓՐ

Գուրգէն ո՞ւր ես, բաց ըզդուռն ո՛ն ։

ԳՈՒՐԳԷՆ

Ոչ անկցի հեր մ'ի նմանէ ։

ՀԱՍԱՆ

Բա՛ց, թէ ոչ խորտակեմք ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛հ Ապուջափր, իմն Հասան,
Ես ներեցի և յարիւն իմ ընկալայ զնա, դուք զխա՛րդ
Ըշդաշըյն ձեր արեամբ նորա կամիք պղծել։

ԴԵՐԵՆԻԿ (առ զինուորս որք կային ի պահ)։

Զօրականք ։

## ՏԵՍԻԼ ԺԱ.

ԳՈՒՐԳԷՆ, ԴԵՐԵՆԻԿ, ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԶԻՆՈՒՈՐՔ,
ապա ՀԱՍԱՆ, ԱՊՈՒՋԱՓՐ, ՀԱՍԱՆԵԱՆՔ

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Դա՛ւ է․ ո՞վ է․․․ ահա Գուրգէն․․․

ԴԵՐԵՆԻԿ

Ի բաց կացէք, նա իմ է․․․
(Հասանեանք խորտակեն զդրունս և դիմեն)։

ԳՈՒՐԳԷՆ (առ Հասան)։

Դարձո՛ զսուրդ ի պատեան․ մի՛ զայն յարիւն շաղախեր․
Ահա բարեկամք ամենեքին ։

ՀԱՍԱՆ

Ա՞յսպէս ուրեմն մատնես զմեզ ։

ԳՈՒՐԳԷՆ

Ի սէր ւ'ի միութիւն ։



ԴԵՐԵՆԻԿ

Եկ ի գիրկս իմ, Հասան քաջ․
Մոռանամ զամենայն զ'առ սէր քաջին գործեցեր ։

ՀԱՍԱՆ

Այո՛, և ես խոստովանիմ, թէպէտ յանցեայ ընդդէմ քո՝
Այլ զամենայն գործեցի առ սէր քաջին Գուրգենի ։

ԳՈՒՐԳԷՆ

Մոռանամ և ես ըզըրնաւս Սենեքերիմ զոր արար․
Յայսմհետէ թէպէտ հեռի և զքեզ, ո՛վ քաջդ, յիշեցից ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Ո՛վ վեհանձըն իշխան, Սենեքերիմ քեզ ծառայ ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Եւ մինչև ցե՞րբ համբերից, վասն դու Գուրգէն եղկելի ։

ԴԵՐԵՆԻԿ

Կալարուք, ո՛վ զօրականք, զայրըդ մատնիչ ուխտադրուժ ։

ԳՈՒՐԳԷՆ

Մի՛ ումեք լիցի վընաս, զայս պաղատիմ Դերենիկ․
Ապուջափր գայցէ ընդ իս, այլ հաշտեսջիր 'նդ իշխանին ։

ԱՊՈՒՋԱՓՐ

Եկից սիրով․․․ ներեա՛ և ինձ, ո՛վ դու իշխանդ Դերենիկ ։

## ՏԵՍԻԼ ԺԲ.

ԱՌԱՋԻՆՔՆ, ՎԱՍԱԿ, ԱՊՈՒՄԿԴԷՄ, ՄԼԷՃ, ՍՄԲԱՏ

ԴԵՐԵՆԻԿ

Աշոտիկ և Վասակ հասեալ առ մեզ ողջանդամ։

ՎԱՍԱԿ

Զի՞նչ այս տեսիլ։

ՀԱՍԱՆ

Ներեա ինձ քաջդ ։

ՎԱՍԱԿ

Ո՛Հ ի վաղուց մոռացայ ։

ԳՈՒՐԳԷՆ

Մըտերիմք դուք և սիրելիք, Թողէք ըզքէն և զվրէժ,
Դաշն ուխտի խաղաղութեան այր այր ի մէնջ կըռեսցէ ։
Ես որդւովս գընամ առ Յոյնս, լիցի տէր ձեր Դերենիկ.
Բայց խորհըրդովք առաքինեօք կացջիք սատար իշխանիդ ։
Մոռասցի որ ինչ եանցն. ամենեքին միաշունչ
Ծըգնեսցին բարգաւաճել զպանծալի տունս Արծրունեաց ։

(Այդ ժամուն յերգ և յերաժշտական փողիւ [1]) ։

ՊԱՐ

Նուագս առէք.
Հեղցին անմահ բաժակք սիրոյ ։
Սուգ մերժեսցի.
Քաջաց վեհապանծ երգս առէք պարուք, Թըմբկօք.
Երգս առէք
Պարուք Թըմբկօք ։
Ծըփան ծիրանիք յԱրծրունեաց չէնս և յաւանս ։
Անմահ հաշտութեան կռեսցի դաշն ուխտի և սիրոյ.
Նուագս հեղէք, Նուագս հեղէք.
Անմահ հաշտութեան կռեսցի դաշն ուխտի և սիրոյ ։
Զուարթասցին հայրենիք. ցընծայ ի սէր եղբարց,
Ի սէր եղբարց միամիտ ։ (Կրկնէ բոլորն անգամ) ։

ԳՈՒՐԳԷՆ

Ո՛Հ, քաջք իմ, ցանկալի էր ինձ ընդ ձեզ
Զկեանս իմ վարել հայրենի յարկ,
Եւ միաբան եռանդեամբ
Ծըգնել ի փառս հայրենի ։
Բայց հրաման երկնից
Ա՛յլ ինձ տայ պատուէր ։

ՊԱՐ

Ա՛ ինչ ըզմեզ լըքանես.
Ամենեքին կեալ ցանկան
Աստ ընդ իշխանիդ.
Նոյն և Դերենիկ ։

---

1 Յարմարեալ ի պարն Coro e sortita Oroveso nella Tragedia lirica Norma, Պելլինի երգահանին ։



ԴԵՐԵՆԻԿ

Այո՛, Գուրգէն, իշխան քաջ,
Կաց աստ ընդ մեզ յԱրծրունիս
Եւ իշխեսցուք միաբան ։

ՊԱՐ

Արդ զի՞նչ ցանկաս.
Լիցիս սիրոյ առհաւատչեայ ։

ԳՈՒՐԳԷՆ

Ի զուր ճըգնիք դուք
Զառաջադրեալն իմ փոխել ։

ՊԱՐ

Եւ զի՞նչ արդ խորհիս ։

ԳՈՒՐԳԷՆ

Բարձրելոյն կամաց հնազանդեալ՝ մեկնել ի ձէնջ,
Եւ մի՛ Թողուլ զիմ յիշատակ
Բայց սիրոյ և ուխտի ։

ՊԱՐ

Ա՞յդպէս անողոք ։

ԳՈՒՐԳԷՆ

Դառն է և ինձ՝ այլ հարկ է ։

ՀԱՍԱՆ

Ո՛վ դու քաջաց անմահ շառաւիղ,
Զի՞արդ ես անջատեցայց քոց յերեսաց.
Այլ միշտ ինձ բաղդ եկաց ոսոխ իմ.
Ո՛հ, դառն է ինձ, ոհ դառն է կեալ հեռ՛ ի քէն ։

ՊԱՐ

Թէ և մեկնեսցիս, այլ յիշատակ քո
Կացցէ անմահ ։

ԴԵՐԵՆԻԿ

Յիշատակ քո սուրբ յԱրծրունիս
Յաւերժասցի անմահ փառօք.
Աւանդեսցեն դարք առ դիւցազունս
Զանուն քաջին Գուրգենի,

## ՊԱՐ

*Սըփռեսցի անուն դիւցազին*
*Դարուց ի դարս առ որդիս.*
*Բա՛. արութեան Գուրգենի հռչակ*
*Եւ Գերենկայ վեհ իշխանին :*
*Սըփռեսցի անուն դիւցազին*
*Դարուց ի դարս առ որդիս : (Կրկնէ բազում անգամ) :*
*Թէ և մեկնեցիս, այլ յիշատակ քո*
*Կացցէ անմահ :*

ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան
NL0340422